

6244

3k713

6-29

~~9.15 (47)~~
~~36-44~~

Ն. ՅԵԼԻԶԱՐՈՎ

3K013
6-29

25 AUG 2005

ԻՆՁ ՎՈՐՈՇԵՅ
ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
14-րդ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

67

10618

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
1926

ՀԱՅՈՒՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԽՍ. ՍՈՍ. ԲԻԲԼԻՈՏԵԿԵ
ՀԱՊԵՂ - ՍՍՐԱ
ԿՈՄ. Ա. ՄԱՏՈՒՆԻՍԻԱՆ

0 5 APR 2013

6244

Напечатано в типографии Госиздата
„Красный Пролетарий“: Москва,
Пушкова ул., д. № 16,
в количестве 3000 экз.
Главлит № 54302.

Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցության
(բոլշևիկները) 14-րդ համագումարի աշխատանք-
ները տեղի ունեցին յերկու շաբաթ (1925 թ. դեկտեմ-
բերի 18-ից մինչև 31-ը, Մոսկվայում)։ Համա-
գումարի ժամանակ կուսակցությունն իր շար-
քերում ուներ մեկ միլիոնից ավելի (1,088,037)
անդամներ և թեկնածուներ։ Հանձինս համագու-
մարին մասնակցող 1,306 պատգամավորների՝
ներկայացված էին կուսակցական բոլոր կազ-
մակերպությունները։

«Կուսակցության համագումարները,—ասաց
Ա. Ի. Ռիկովը՝ բանալով 14-րդ համագումարը,—
միշտ ել միանգամայն բացառիկ յերևույթ են
յեղել վոչ միայն կուսակցության, այլև բանվոր
դասակարգի և ամբողջ յերկրի կյանքում։ Վլա-
դիմիր Իլյինը միշտ մի առանձին ուշադրությամբ
եր պատրաստվում կուսակցության համագու-
մարների համար և դրանց վրա նայում եր վոր-
պես այնպիսի դեպքերի վրա, վորոնք վճռական
դեբ են կատարում։ Մեր կուսակցության 14-րդ
համագումարը պետք է հաշվի առնի այն ամենը,
ինչ վոր արված է անցյալ շրջանում։ Նա պետք

3743 1008 36813

ե տա անաչառ գնահատությունն անցյալ համագումարում ընտրված կենտրոնական որգանների գործնեյության, նա պետք է տա գիրքեկտիվներ՝ հետագա գործնեյության համար, և վորոշի սոցիալիստական շինարարության մոտակա ուղիները»:

14-րդ համագումարը քննեց կենտրոնական կոմիտեյի, վերաստուգիչ կոմիտեյի, կենտրոնական վերահսկիչ Հանձնաժողովի, ՌԿԿ՝ կոմինտերնի մեջ գտնվող ներկայացուցչության հաշվետու զեկուցումները և դրանց նկատմամբ վորոշումներ կայացրեց: Բացի դրանից, համագումարը քննեց արհեստակցական միություններին, կոմյերիտմիության հետագա աշխատանքին վերաբերող հարցերը, կուսակցության կանոնադրության մեջ մի շարք փոփոխություններ և լրացումներ մտցրեց, վորոշեց ՌԿԿ (Բ) վերանվանել ՀԿԿ (Բ) [Համամիության կոմունիստական կուսակցություն (բոյլշևիկներ)], և ընտրեց կուսակցության կենտրոնական որգաններ— կենտրոնական կոմիտե, կենտրոնական վերահսկիչ Հանձնաժողով և վերաստուգիչ Հանձնաժողով:

կենտրոնական կոմիտեյի աշխատանքի մասին համագումարին հաշվետու զեկուցումներ արին ընկ. Ստալին և ընկ. Մոլոտովը: Համագումարն

այդ զեկուցումները յենթարկեց շատ լուրջ և մանրազնին քննության, վորին մասնակցեցին մինչև 50 պատգամավոր: Այդ զեկուցումները լսելով՝ համագումարը, 559 ձայնով ընդդեմ 65-ի, ընդունեց մի բանաձև, վորը գծում է խորհրդային Միության շինարարության հետագա ուղիները. —

«ՌԿԿ 14-րդ համագումարը, — ստիճում է այդ քանաձեյում, — անբողոքի և հավանություն է տալիս Կենտրոնական կոմիտեյի ֆալսիֆիկացիայի և քանակապես զոհի, վորը ժողովրդական տնտեսության ընդհանուր վերելքը կուսակցության, քանի որ դատարարի յեղ անբողոք յերկրի համար ապահովեց յեղ սոցիալիզմի դիրքերը ամրացրեց՝ թե յերկրի ներսում յեղ թե յերկրից դուրս»:

Համագումարը գտավ, վոր կենտրոնական կոմիտեն տարեկ է միանգամայն ուղիղ քաղաքականություն, վորի շնորհիվ խորհրդային Միության միջազգային և ներքին դրությունը բավականաչափ ամրացել է:

ԽՍՀՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒՅՑՈՒՆԸ

Ընկ. Ստալինը համագումարին արած իր հաշվետու զեկուցման մեջ բավականաչափ լրիվ նկարագրեց խորհրդային Միության միջազգային դրությունը:

Հաղթական կերպով վերջացնելով քաղաքացիական կռիվը, Խորհրդ. Միությունը (այն ժամանակ դեռ ՌՍԽՀՄ), ղինվորական տաժանելի աշխատանքից հետո, դադարի շրջան ապրեց։ Ռուսական սպիտակ-գվարդիականները ջարդվեցին։ Արևմտ. Յեվրոպայի կապիտալիստները չկարողացան կործանել բանվորա-գյուղացիական յերիտասարդ պետությունը։ Նրանք ստիպված յեղան մեզ հանգիստ թողնելու։ Բայց վո՞րքան ժամանակ։ — Դրան այն ժամանակ դժվար էր պատասխանել։ Բայց պարզ էր, վոր մեր թշնամիները փորձում էին ոգտագործել ամեն մի նպաստավոր մոմենտ՝ Խորհրդային Միության վրա հարձակվելու համար։ Սակայն այդ—տեղի չունեցավ, թեև մեր դեմ պատերազմի պատրաստության փորձեր արվեցին, բայց դրանք ամեն անգամ անհաջողությամբ վերջացան։

Ինչո՞ւ։ Ի՞նչն էր խանգարում մեր թշնամիներին՝ կործանելու Խորհրդային Միությունը։ Ի՞նչ էր նրանց ձեռքերը կապում։

Կապիտալիստական պետությունների քաղաքական, նրանց միջով յեղած վեճերն ու տարաձայնությունները, Արեվմոսֆում յեղ Արեվելյում՝ աճող հեղափոխական շարժումը, իրեն՝ Խորհրդային Միության ուժերի ուժեղ աճումը—այդ բոլորը խանգարեց մեր թշնամիներին, նրանց ձեռ-

քերը կապեց, չափավորեց նրանց ավազակային ախորժակները և մեր դադարի շրջանը տևական դարձրեց։

Ավելին։ Կապիտալիստական պետությունները ստիպված յեղան, մեկը մյուսի յետևից, ճանաչել Խորհրդային Իշխանությունը. ճանաչեցին Խորհրդային Իշխանությունը վորպես Ռուսաստանի միակ որինական կառավարություն, նրա հետ առևտրական պայմանագրեր կնքեցին, առևտուրը վերականգնեցին։ Մինչդեռ առաջ, քաղաքացիական կռիվ տարիներում, և այդ կռվից հետո յեղ՝ առաջին տարիներում, կապիտալիստական պետությունները Խորհրդային Իշխանությունը չէին ճանաչում, հրաժարվում էին նրա հետ վորևե հարաբերության մեջ լինել։

* * *

Արևմտյան և Արևելյան յերկրների բանվորներն ու գյուղացիները ուրախությամբ և հպարտությամբ հետևում են Խորհրդային Միության կյանքին ու աշխատանքին։ Նրանք մեր գործը համարում են իրենց գործը, մեր հաջողությունները—իրենց հաջողությունները, մեր սխալներն ու վրիպումները—իրենց սխալներն ու վրիպումներն են համարում։

Կապիտալիստական յերկրներէ ու Խորհրդային Միութեան բանվորներէ միջև կապն ու մոտեցումը որեցոր զարգանում և ուժեղանում ե: Վերջին տարին ևրոպական յերկրներից բանվորական մի շարք պատգամավորութիւններ են մեզ այցելել: Նրանք գալիս եյին մեզ մօտ, վորպէսզի իմանան ճշմարտութիւնը Խորհրդային Միութեան մասին: Նրանք ուշադրութեամբ քնննեցին մեր հանրապետութեան ամեն անկիւնը: Նրանք տեսան, վոր բանվոր դասակարգը և գյուղացիութիւնը իզուր չե, վոր կատարեցին Հոկտեմբերյան հեղափոխութիւնը, իզուր չե, վոր քաղցի, ցրտի ու համաճարակի տառապանքները տարան, իզուր չե, վոր պաշտպանեցին իրենց հեղափոխական նվաճումները:

Խորհրդային Միութիւնը ամրանում ե արհեստապես և քաղաքականապես: Քիչ-քիչ բարձրվում ե բոլոր աշխատավորներէ զրութիւնը: Արեւմտյան Յեւրոպայի բանվորներն այդ տեսնում են և հպարտանում մեր հաջողութիւններով: Մեր փորձի վրա նրանք համոզվում են, վոր բանվոր դասակարգը և հեղափոխական գյուղացիութիւնը ընդունակ են կալվածատերերի և կապիտալիստների հին պետութիւնը վոչ միայն քանդելու, այլ և կառուցելու և առաջ մղելու նորը, իրենց բանվորա-գյուղացիական պետու-

թիւնը՝ ինքնուրույն կերպով, առանց կապիտալիստի և կալվածատերի:

Արեւմտյան Յեւրոպայի բանվորները, այցելելով Խորհրդային Միութիւնը, համոզվում են, վոր բանվոր դասակարգն և գյուղացիութեան լայն մասսաներն իրենց ճնշված ու իրավազուրկ կացութիւնից ազատվել, սոցիալիստական հանրապետութիւն կառուցանել կարող են՝ միայն բուրժուազիային կործանելով և իշխանութիւնն իրենց ձեռքն առնելով:

Արեւմտյան յերկրներէ բանվորներէ պատգամավորութիւնները մեզնից հեռանում են այն համոզումով, վոր անհրաժեշտ ե նաեւ իրենց յերկրում կռիւ մղել պրոլետարիատի դիկտատուրայի համար: Նրանք մեզ ամեն տեսակի ոգնութիւն և աջակցութիւն են խոստանում: Նրանք իրենց յերկրներում կպատմեն ճշմարտութիւնը Խորհրդային Միութեան մասին: Նրանք թույլ չեն տա, վոր մեր թշնամիները ամեն տեսակ ստեր ու զրպարտութիւններ տարածեն մեր Միութեան մասին: Արեւմուտքի և Արեւելքի աշխատավոր մասսաները գիտեն, վոր միմիայն Խորհրդային Միութիւնն ե, վոր դեմ ե իմպերիալիստական կռիւներին, դեմ ե թույլ ժողովուրդներին ստրկացնելուն ու թալանելուն:

Յեւ մահա այժմ, յերբ իմպերիալիստական

պետութիւնները շտապով զինվում են, յերբ նոր պատերազմներ յերկրուղը կա, — Արեւմուտքի և Արեւելքի բանվոր դասակարգն ու ամբողջ աշխատավորութիւնը առանձին սուր անհրաժեշտութիւն են զգում եւ ամբողջ սերտ մերձենալու խորհրդային Միութեանը։ Այդ մերձեցումը որեւոր աճում է և ամբանում։ Դրանում խորհրդային Միութեան միջազգային դրութեան ամբողջան յերաշխիքն է։

* * *

Մանրամասն ծանոթանալով խորհրդային Միութեան միջազգային դրութեան հետ, 14-րդ Համագումարը մի շարք կարեւոր վորոշումներ հանեց։

Համագումարը հանձնարարեց Կենտրոնական Կոմիտեյին ամեն կերպ ուժեղացնել կապը Արեւմտեան Յեւրոպայի պրոլետարիատի յետ գաղութների ու կիսագաղութների նկատմամբ ժողովուրդների հետ։

Համագումարն իր բանաձեւում շեշտեց, վոր ԽՍՀՄ յետեւ է յետ մնում է բոլոր յերկրների պրոլետարիատի նեցուկը՝ կապիտալիզմի դեմ ունեցած նրա կռիւմը։

Համագումարը ցուցումով արեց կուսակցութեանը, վոր անհրաժեշտ է իր աշխատանքում յարաբերել խորհրդային Միութեան սահման-

ների մեջ, այլ միջազգային պրոլետարիատի հետ պաշտպանական զարգացման յետ հաղթանակի կուրս վերցնել։

14-րդ համագումարը հանձնարարեց Կենտրոնական Կոմիտեյին՝ ամեն իսադադարական խաղաղութեան, պայքարել նոր պատերազմների դեմ, պայքարել հոգոս խաղաղութեան՝ բոլոր ժողովուրդների համար։

Այդ խաղաղութիւնը խորհրդ. Միութեան համար անհրաժեշտ է յերկրի անտեսութիւնը, բոլոր բնագավառներում, բարձրացնելու և զարգացնելու ինքրում հաջող աշխատանք տանելու համար, բանվոր դասակարգի և գյուղացիութեան դրութիւնը բարձրելու, սոցիալիզմի շինարարութեան գործը մեզ մոտ լավ հիմքերի վրա դնելու համար։

Բայց խորհր. Միութեանը ապրում է շրջապատված կապիտալիստական պետութիւններով, վորոնք պատրաստ են ամեն հարմար ըստ ոգտագործելու՝ նրա վրա հարձակվելու համար, նրան վոչնչացնելու համար։ Ուստի և համագումարը հանձնարարեց Կենտրոնական Կոմիտեյին՝ ամեն կերպ ուժեղացնել յերկրի պաշտպանողական կարողութիւնը, ուժեղացնել կարմիր Բանակը և նավատորմը։ խորհրդային Միութեանը պետք է պատրաստ լինի ամեն ինչի։ Թշնամիները նրան անակընկալ չեն բռնի։

ԽՍՀՄ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

14-րդ համագումարը մեծ ուշադրություն է դարձրել կանգ առավ Նորհրդային Միության ներքին զրու-
թյանը վերաբերող հարցերի վրա: Համագումարը
հաշվի առավ և կշռադատեց մեր շինարարության
մեջ ունեցած մեր հաջողությունները, մեր վրի-
պունքներն ու սխալները, ուժեղ և թույլ կողմերը:

Համագումարը մատնանշեց, վոր անցյալ տա-
րին Նորհրդային Միության ժողովրդական ամ-
բողջ տնտեսության փոթորկալից աճման տարի
յե յեղել: Այդ աճումը տնտեսական մի ամբողջ
շարք բնագավառներում մոտեցրել է մինչպատե-
րագմյան զրությանը:

Գյուղական տնտեսությունը 1924—25 գյու-
ղատնտեսական տարում տվել է մինչպատերազմ-
յան իր արտադրանքի 71 տոկոսը: Յենթադրվում
է, վոր 1925—26 տարում գյուղական տնտե-
սությունը կտա 11 միլիարդ ռուբլու արտադրանք,
վոր կազմում է մինչպատերազմյանի 87 տոկոսը:

Նորհրդային Միության արդյունաբերության
(պետական, կոոպերատիվ և մասնավոր) ընդհա-
նուր արտադրանքը 1924—1925 թվին յեղել է
հինգ միլիարդ ռուբլու, կամ 71 տոկոս՝ մինչ-
պատերազմյանի: Ըստ վորում, 1923—24 տնտե-
սական տարում պետական և կոոպերատիվ ձեռ-
նարկությունները տվել են ամբողջ արտադրան-

քի 76 տոկոսը և մասնավոր ձեռնարկու-
թյունները—24 տոկոսը, իսկ 1924—25 տարում՝ պե-
տական և կոոպերատիվ ձեռնարկու-
թյունները տվել են 79,3 տոկոս, իսկ մասնավորները—20,7
տոկոս: Այդ նշանակում է, վոր պետական և
կոոպերատիվ արդյունաբերության բաժինն ու
նշանակությունը տարեց տարի ավելանում է,
իսկ մասնավոր արդյունաբերության բաժինը
պակասում: Պետական և կոոպերատիվ արդյու-
նաբերությունը մասնավոր արդյունաբերությանը
գերակշռում է:

1923—1924 տարում պետական արդյունա-
բերությունը տվել է 142 միլիոն ռուբլի ոգուտ,
դրանից 71 միլիոնը անցել է գանձարանին յեկա-
մուտ: Իսկ 1924—1925 տարում պետական ար-
դյունաբերությունը տվել է արդեն 315 միլիոն
ռուբլի ոգուտ, դրանից 173 միլիոն ռուբլի յեն-
թադրվում է հանձնել գանձարանին:

Բավականաչափ առաջ է գնացել ու լայնացել
է յերկաթուղային տրանսպորտի աշխատանքը:
1923—1924 տարում յերկաթուղիները փոխա-
դրել են 4120 միլիոն փութ բեռներ, իսկ 1924
—25 տարում—5040 միլիոն փութ:

Ավելացել են արտաքին առևտրի շրջանառու-
թյունները:

1923—24 տարում արտասահման ուղարկվել
է գանազան ապրանք՝ 522 միլիոն ռուբլու, իսկ

ներմուծվել—439 միլիոն ռուբլու: Ընդհանուր շրջանառությունը հավասար է 961 միլիոն ռուբլու: Թվերից յերևում է, վոր դուրս ուղարկված ապրանքը ստացված ապրանքից ավել է 83 միլիոն ռուբլով, վորը ֆնացել է պետական գանձարանում: Արտաքին առևտուրը 1923—1924 տարում տվել է 26 միլիոն ռուբլի ոգուտ:

1924—1925 տարում արտաքին առևտրի ընդհանուր շրջանառությունը կազմում էր 1,272 միլիոն ռուբլի: Բայց այդ տարի ներմուծված ապրանքը 144 միլիոն ռուբլով ավելի յե դուրս ուղարկված ապրանքից: Այս նշանակում է, վոր մենք արտաքին առևտրի մեջ ծայրը ծայրին դեռ չենք հասցրել, և ստիպված եյինք պահեստի միջոցներից 144 միլիոն ռուբլի ծախսել: Այս դրությունը համագումարը աննորմալ համարեց: Համագումարն ասաց, վոր այստեղ սխալ է տեղի ունեցել, և կենտրոնական կոմիտեյին առաջարկեց աչալուրջ հետևել, վոր նման սխալներ այսուհետև տեղի չունենան:

Ներքին առևտրի շրջանառություններն ևս աճել են: 1923—1924 գյուղատնտեսական տարում նրանք կազմում էյին մինչպատերազմյան շրջանառության 51 տոկոսը, իսկ 1924—25 տարում—71 տոկոս: Առևտրի մեջ ևս, ինչպես և արտադրության մեջ, պետության և կոոպե-

րացիայի նշանակութունը աճել է և մասնավոր կապիտալի նշանակությունը պակասել: 1923—1924 տարում առևտրական շրջանառության մեջ պետության բաժինը կազմում էր 45 տոկոս, կոոպերացիայինը՝ 19 տոկ., և մասնավոր կապիտալի բաժինը—36 տոկոս: Իսկ առևտրական շրջանառության մեջ՝ 1924—1925 տարում պետության բաժինը կազմում էր 50 տոկ., կոոպերացիայինը—24,7 տոկ. և մասնավոր կապիտալինը՝ 24,9 տոկոս: Ըստ վորում մանր առևտրի մեջ 1923—24 տարում գերակշռում էր մասնավոր կապիտալը, իսկ 1924—25 տարում գերակշռում են արդեն պետությունն ու կոոպերացիան: Պետական առևտուրը 1923—1924 տարում տվել է 35 միլիոն ռուբլի ոգուտ, վորից 14 միլիոն ռուբլի անցել է գանձարանին մուտք: 1924—25 տարում պետական առևտուրը, գների իջեցման քաղաքականության հետևանքով, ոգուտ է տվել միայն 20 միլիոն ռուբլի, վորից 10 միլիոնը կզնա գանձարանին մուտք:

Անցած տարին բաժանին հաջողություններ է ունեցել կոոպերացիան: Ահա մի քանի թվեր.— ԹեՍՖՀ առ 1-ն հունվար 1924 թ. կոոպերացված է յեղել (կոոպերացիայի այս կամ այն տեսակի մեջ միացված է յեղել) 1,470,000 գյուղացիական տնտեսություն, առ 1-ն հունվար

1925 թ.—2,650,000 տնտեսություն, առ 1-ն հուլիս 1925 թ.—3,900,000 տնտեսություն: Սպառողական կոոպերատիվների շրջանառությունները 1924—1925 տարում կազմում էին 3,720 միլիոն ռուբլի, վոր ասել է՝ նախորդ տարվա հետ համեմատած՝ 55% ավելի: Գյուղատնտեսական կոոպերացիաների շրջառությունները 1924—1925 տարում կազմում էին 996 միլիոն ռուբլի, ասել է՝ նախորդ տարվա շրջանառություններից 57%-ով ավելի: Բայց գյուղատնտեսական կոոպերացիաների աշխատանքը համագումարը գտավ թույլ և առաջարկեց կուսակցության բոլոր անդամներին ձեռք առնել բոլոր միջոցները՝ նրա ուղիղ աճումը զարգացնելու և փութացնելու:

Յերկրի տնտեսության աճումը ամենից պարզ կերպով անդրադառնում է պետական բյուջեյի ավելացման վրա (պետական ծախսերի և յեկամատացույցի վրա): Պետական բյուջեյին 1923—24 տարում կազմում էր 1,917 միլիոն ռուբլի, 1924—25 տարում—2,800 միլիոն ռուբլի կամ մինչև պատերազմյան բյուջեյի 71%, իսկ ընթացիկ 1925—26 տնտեսական տարում բյուջեյին կհասնի մինչև 4,000 միլիոն ռուբլի:

Խորհրդային Միության տնտեսությունը որեցոր աճում է, բարձրանում: Բանվոր դասակարգն

ու գյուղացիությունը սոցիալիստական շինարարության մեջ հասել են առաջին լուրջ հաջողությունների: Այդ հաջողությունները նրանք ձեռք են բերել առանց վորևե արտաքին ոգնություն:

Այդ մի ավելորդ անգամ հաստատում է Վ. Ի. Լենինի խոսքերն այն մասին, վոր Խորհրդային Միությունը սոցիալիստական պետության հաջող շինարարության համար բոլոր անհրաժեշտ տվյալներն ունի: Յեվ 14-րդ համագումարը իր բանաձևում ընդգծեց, վոր ԽՍՀՄ մեջ սոցիալիստական շինարարության հաղթանակի համար մղվող պայքարը մեր կուսակցության հիմնական խնդիրն է հանդիսանում:

Համագումարը հանձնարարեց կենտրոնական կոմիտեյին, տնտեսական քաղաքականության ընադավառում ամենալուրջ ուշադրություն դարձնել և ամեն կերպ ապահովել, վոր սոցիալիստական տնտեսական ձեռնարկությունները մասնավոր կապիտալին հաղթեն: Ամուր պահել արտաքին առևտրի մոնոպոլիան: Ուժեղացնել պետական սոցիալիստական արդյունաբերության աճումը, պետական արդյունաբերության աշխատանքը բարվոքել, նրա արտադրած նյութերի հատկությունը լավացնել այնպես, վոր նա հետզհետե ավելի լավ և ավելի չափով բավարարի գյուղացիական տնտեսության պահանջարկը:

1008
36813

3743



սոցիալիստական շինարարութեան աշխատանքի լծել գյուղացիութեան նորանոր մասսաներ:

ԽՍՀՄ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՐԸ

Խորհրդային Միութեան ժողովրդական տնտեսութիւնը վերջին տարում մոտեցել է մինչպատերազմյան իր վիճակին: Փաբրիկաներն ու գործարանները, վոր մենք ժառանգութիւն ենք ստացել ցարական Ռուսաստանից, մեծ մասով արդէն վերականգնած են: Կանցնի ևս մեկ տարի և մեզ մոտ չի լինի մի փաբրիկա կամ գործարան՝ վոր չգործի: Անցյալից ստացած ժառանգութիւնը մենք ոգտագործել ենք, սարքի գցել ու աշխատեցրել: Դրանք պետք է մե՛ր տեսակի կառուցենք, նո՛ր ձևով, խորհրդային ձևով: Բայց ի՞նչպէս կառուցել: Ժողովրդական տնտեսութեան զարգացումը վո՛ր ուղիով պետք է գնա: Վո՞րն է մեր տնտեսական հետագա զարգացման գլխավոր գիծը:

Այս հարցերը բազմակողմանիորեն քննեց կուսակցութեան 14-րդ համագումարը և վորոշակի պատասխաններ տվեց:

Մեր յերկիրը դեռևս մեծ մասով յերկրագործական յերկիր է: Մեզ մոտ գյուղական տնտեսութեան արտադրանքն ավելի՛ յե, քան արդյունաբերութեան արտադրանքը: Այդ պարզվեց վե-

րև բերած թվերից. — 1913 թվին գյուղական տնտեսութեան արտադրանքը գնահատվում էր 12 միլիարդ ռուբլի, արդյունաբերութեանը — 7 միլիարդ ռուբլի, իսկ 1924 — 25 տնտեսական տարում արդյունաբերութեան արտադրանքը գնահատվել է 5 միլիարդ ռուբլի, իսկ գյուղական տնտեսութեան արտադրանքը — 9 միլիարդ ռուբլի:

Հին հասարակակարգից մեր ստացած հին արտադրութեանը մեքենաներ չի արտադրում: Նրա պատրաստած նյութերը անբավական են՝ յերկրի ամբողջ պահանջը բավարարելու համար, մանավանդ գյուղացիութեան պահանջը: Բացի այդ, մեր արդյունաբերութիւնը, բավական խոշոր մասով, կահավորման կողմից չափազանց աղքատ է: Յարական կառավարութիւնը արտասահման էր ուղարկում գյուղական տնտեսութեան մթերքներ և ախտեղից ստանում փաբրիկաների ու գործարանների համար կահավորութիւն և պատրաստի իրեր: Յերկրից դուրս ուղարկված և դրսից մուծված իրերի գինը թելադրում էր շուկան: Յարական Ռուսաստանը գյուղական տնտեսութեան արտադրանքը վաճառում էր այն գներով, ինչ գներ վորոշ ժամանակ սահմանվում էյին շուկայում, իսկ գնում էր, նախ — այն, ինչ վոր նրան վաճառում էյին, իսկ յերկրորդ՝ այնպիսի գներով, ինչպիսի գներ սահմանվում էյին

արտաքին շուկայում: Այսպիսով, ցարական Ռուսաստանը արտասահմանի նկատմամբ կախման մեջ եր գտնվում: Կապիտալիստական պետությունները շահագրգռված չեյին, վոր Ռուսաստանի արդյունաբերությունը զարգանա: Ընդհակառակը, նրանց ձեռնառու եր, վոր Ռուսաստանում թույլ արդյունաբերություն լինի: Նրանց համար շահավետ եր՝ իրենց ֆաբրիկային արտադրությունները Ռուսաստան ներմուծել և այստեղից դուրս հանել հում նյութ, այսինքն՝ Ռուսաստանի տնտեսությունը զարգացման ցածր մակարդակի վրա թողնել, Ռուսաստանը տեսնել վորպես ագրարային մի յերկիր՝ կապիտալիստական Յեվրոպայից կախում ունեցող:

Այդ դրության մեջ կարող եր ընկել և Խորհրդային Միությունը: Իր ժամանակին հենց այդ հանգամանքն են հաշվի առել Յեվրոպայի կապիտալիստական պետությունների ղեկավարները, յերբ նրանք Խորհրդային Ռուսաստանը տնտեսապես հպատակեցնելու իրենց ծրագիրն եյին մշակում:

1920 թվին, յերբ Խորհրդային Ռուսաստանից բլոկադան վերացվեց, Լլոյդ-Ջորջը, վորն այն ժամանակ անգլիական կառավարության գլուխն եր կանգնած, հայտարարեց. — յերբ մենք չկարողացանք բոլշևիկներին ճնշել մահակով,

մենք նրանց անպատճառ կճնշենք ռուբլով: Այդ նշանակում ե, վոր կապիտալիստական պետությունները մեր դեմ բաց կռիվ մղելուց հրաժարվելով, վճռեցին կռիվը Խորհրդային Ռուսաստանի դեմ շարունակել, բայց միայն ուրիշ միջոցներով, այն ե՝ տնտեսական միջոցներով:

Նրանք ցանկանում եյին ազատ մուտք ունենալ Ռուսաստան, հույս ունենալով, վոր Խորհրդային արդյունաբերությունը հետզհետե կկրծկվի ու կմեռնի և կամ նա կանցնի Արևմտյան Յեվրոպայի կապիտալիստների ձեռքը: Այդպիսով Արևմտյան Յեվրոպայի կապիտալիստները մտադիր եյին մեր տնտեսությունը իրենց ազդեցությանը յենթարկել:

Այդպիսով նրանք նախապատրաստում եյին կապիտալիստների և կալվածատերերի վերականգնումը մեր յերկրում, և, մասնավորապես, այդպիսով նրանք մտադիր եյին ռուս բանվորից ու գյուղացուց ցարական պարտքերը ստանալ: Բայց նրանք իրենց հաշիվներում սխալվեցին: Խորհրդային կառավարությունը արտաքին առևտրի մոնոպոլիա սահմանեց, այսինքն՝ արտաքին ամբողջ առևտուրը իր ձեռքում կենտրոնացրեց, թույլ տալով վոր արտասահման ուղարկվի այն, ինչ վոր մեզ մոտ պահանջված չափից ավելի՝ յե, և

արտասահմանից ստացվի այն, ինչ վոր մեզ համար անհրաժեշտ է:

Բայց և այնպես մենք ստիպված ենք կապիտալիստական պետութիւնների հետ առևտուր անել—արտասահման հում նյութ ուղարկել և ստանալ այն, ինչ մեզ անհրաժեշտ է, գլխավորապես՝ գյուղատնտեսական գործիքներ և մեր ֆաբրիկաների ու գործարանների համար կահավորութիւն (մեքենաներ):

Մեր տնտեսութեան ներկա դրութեամբ՝ մենք չենք կարող արտասահմանի հետ կապեր չունենալ: Մենք ստիպված ենք դուրս տանել գյուղական տնտեսութեան արտադրանքներ, վորոնք մեզ մոտ պահանջված քանակից ավելի յեն, և ներմուծել մեքենաներ: Բայց դրա հետևանքով մենք արտաքին շուկաներից կախման մեջ ենք դրվում: Մեր տնտեսութիւնը համաշխարհային կապիտալիստական տնտեսութեան մեջ կարող է մի ավելորդ բան դառնալ, մենք կարող ենք կորցնել մեր տնտեսական ինքնուրույնութիւնը, իսկ դրա հետ—մեր տնտեսութիւնը առանց կապիտալիստների և կալվածատերերի կառուցելու հնարավորութիւնը:

Բայց մենք կհրաժարվենք տնտեսութեան սոցիալիստական շինարարութիւնից:—Վո՛չ, Յերբեք չենք հրաժարվի: Նշանակում է, մենք մեր

տնտեսութիւնը պետք է այնպե՛ս կառուցենք, վոր նա հետզհետե ինքնուրույն դառնա:

Իսկ մեր տնտեսութեան ինքնուրույն գոյութեան և զարգացման համար ի՞նչ է անհրաժեշտ:

Անհրաժեշտ է խիստ զարգացած ծանր արդիւնաբերութիւն, վորպեսզի մեր ֆաբրիկաների ու գործարանների համար կահավորութիւն արտադրի: Մենք պետք է վո՛չ միայն ֆաբրիկաներ և գործարաններ կառուցենք՝ այս կամ այն աստիճանքը մշակելու համար, այլև անհրաժեշտ է, վոր մենք ինքներս արտադրենք այնպիսի մեքենաներ ու դադգահներ, վորոնք մեր ֆաբրիկաների և գործարանների համար մեքենաներ ու դադգահներ շինեն:

«Մենք ուզում ենք արտադրել,—ասաց ընկ. Ստալինը 14-րդ համագումարին՝ իր յեզրափակող խոսքում,—վոչ միայն չիթ, այլև՝ չիթ արտադրելու համար անհրաժեշտ մեքենաներ: Մենք ցանկանում ենք արտադրել վոչ միայն ավտոմոբիլներ, այլև ավտոմոբիլներ արտադրող մեքենաներ: Մենք ուզում ենք արտադրել վոչ միայն չաքմա (բարձրաճիւղ կոշիկ), այլև չաքմա արտադրող մեքենաներ: Դրսից գործարանային կահավորութիւն ստացող մեր յերկիրը՝ մենք պետք է մի այնպիսի յերկիր դարձնենք, վոր ինքն է այդ կահավորութիւնն արտադրում»:

Կամ—ինչպես ասված է 14-րդ համագումարի բանաձևում—անհրաժեշտ է «այսպիսով խՍՀՄ սևեռասկան ինֆեռուրոյնությունը, վոր նա համաշխարհային կապիտալիստական սևեռությունն մեջ ավերորդ բան չդառնա: Այդ նպատակով ձգտել յերկրի ինդուստրիալիզացիային, զարգացնել արտադրությունն ու արտադրության միջոցները յեղջրեսեռական շրջանառության համար պահեստի միջոցներ ստեղծել»:

Բայց արդյո՞ք դա նշանակում է, վոր մենք բոլորովին հրաժարվում ենք արտասահմանից կահավորություն բերել տալուց: Վո՞չ յերբեք: Մենք առայժմ կողարկենք արտասահման մեզ ավելորդ հում նյութը (փայտ, հաց, կտավատ և այլն) և այնտեղից կստանանք մեքենաներ ու դազգահներ: Բայց միաժամանակ մենք պետք է այդ մեքենաների ու դազգահների նաև արտադրության գործը լավ հիմքերի վրա դնենք մեզ մոտ, Խորհրդային Միության մեջ: Իսկ յերբ մենք մեր ծանր ինտուստրիան (արդյունաբերությունը) այնքան կզարգացնենք, վոր նա մեր ֆաբրիկաների ու գործարանների կահավորման համար բավականաչափ մեքենաներ ու դազգահներ կարողադրի, այն ժամանակ, ի հարկե, մենք կհրաժարվենք արտասահմանից կահավորության համար գործիքներ ստանալ: Իսկ առայժմ մենք

կշարունակենք այդ ստանալ: Դա կոգնի մեզ՝ մեր արդյունաբերություն զարգացումն արագացնելու: Դա Խորհրդային Միության տնտեսության զարգացման հիմնական գիծը կամրացնի:

Այդպե՞ս է մեր զարգացման հիմնական գիծը: Այդպես է այն ուղին, վորով գնալու յե Խորհրդային Միության տնտեսական զարգացումը: Այդպես է կուսակցության 14-րդ համագումարի հիմնական վճիռը տնտեսական շինարարության բնագավառում:

Բացի դրանից, համագումարը նիշեց պահեստի ֆոնդեր կազմելու անհրաժեշտությունը՝ տնտեսական շրջանառություններ կատարելու համար: Այդ ի՞նչ է նշանակում: Այդ նշանակում է, վոր մենք պետք է պահեստի միջոցներ ունենանք: Ի՞նչու համար: Նրա՛ համար, վոր մեզ ապահովադրենք ամեն տեսակի անակնկալներից: Որինակ՝ կարող է անբերրիություն լինել, ապրանքի պակասություն լինել, չնախատեսանված ծախս լինել: Այն ժամանակ, ունենալով պահեստի միջոցներ, մենք ավելի հեշտ և արագ կհաղթենք և՛ անբերրիությունը և՛ ապրանքի պակասությունը:

Պահեստի միջոցներ ունենալու անհրաժեշտությունն առանձնապես սուր կերպով զգացվեց վերջին ամիսներին, յերբ յերևան յեկան

մեր տնտեսական որդանները սխալ հաշիվները: Այդ սխալմունքը կայանում է նրանում, վոր մեր տնտեսական որդանները գերազնահատել էյին բերքի չափերը, և, յեղնելով այդ գնահատությունից, կազմել էյին հացի մթերումի, հացն արտասահման ուղարկելու, արտասահմանից ապրանքներ ստանալու ծրագիրը, արդյունաբերությունը լայնացնելու ծրագիրը: Իսկ յերբ բերքը յենթադրածից պակաս դուրս յեկավ, այն ժամանակ ստիպված յեղան այդ բոլոր ծրագրները վերստին կազմել՝ կրճատումներ անելով: Իսկ յեթե մենք ունենայինք պահեստի միջոցներ, այն ժամանակ այդ կրճատումները կարելի կլիներ և չանել: Այստեղից պարզ է, թե մեզ համար վորքա՞ն անհրաժեշտ է պահեստի ֆոնդեր ունենալ:

Համագումարը ուղարկություն դարձրեց մեր տնտեսական որդանների այդ սխալմունքի վրա և կենտրոնական կոմիտեյին առաջարկեց ուժեղացնել ղեկավարությունը նրանց աշխատանքի նկատմամբ, ուղարկը հետեւել, վոր այդպիսի սխալներ հետագայում տեղի չունենան:

Համագումարը մատնանշեց՝ մեր յերկրի արտադրության յեւ արտանմային շրջանառության զարգացմանը աւելե կերպ նպաստելու նկրտությունը:

Վերին աւսիճանի խնայողաբար ծախսել պեսական միջոցները:

Բարձրացնել պեսական արդյունաբերության, առեւտրի յեւ կոոպերացիայի շրջանառության արագորոյնը:

Լայնացնել մեր սոցիալիսական արդյունաբերությունը՝ իստագոյն համակերպելով ինչպես շուկայի պարունակության, անպես յեւ պեսության միևնույնական հնարավորությունների հետ:

Աւելե կերպ աջակցել զարգացնել տեղական արդյունաբերությունը, վոր պետք է քաղաքի տեղական ազգաբնակչության պահանջներն ու կարիքները՝ առհասարակ, յեւ գյողացիության պահանջները՝ մասնավորապես: Աջակցել տեղական նախաձեռնությունը՝ այդ արդյունաբերության կազմակերպման գործում:

Այսպես են կուսակցության 14-րդ համագումարի դիրեկտիվները արդյունաբերության, առեւտրի և կոոպերացիայի բնագավառում:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՁԱՐԳՆՅՄԱՆ
ՈՒՂԻՆԵՐԸ

Ամենքին հայտնի է, վոր արդյունաբերության և գյուղական տնտեսության միջև սերտ կապ կա: Մեր արդյունաբերությունը աշխատում

ե գլխավորապես ներքին շուկայի համար: Նրա ապրանքների գլխավոր սպառողը հանդիսանում է գյուղական բնակչութունը—գյուղացիութունը: Գյուղացիութունը վորքան շատ արտադրի ու վաճառի գյուղատնտեսական արտադրանք, նա այնքան ավելի կգնի արդյունաբերական ապրանք: Արդյունաբերության մի մասը մշակում է այն հում նյութը, վոր արտադրում է գյուղական տնտեսութունը: Գյուղական ամբողջ տնտեսութունը աշխատում է այն մեքենաներով ու գործիքներով, վոր ֆաբրիկաներն ու գործարաններն են արտադրում: Առանց գյուղական տնտեսութան բարձրացման, առանց տեխնիկական կուլտուրաների (կտավատ, կանեփ, բամբակ) ցանքսերի լայնացման, առանց բարձրացնելու գյուղացիութան գնողական ընդունակութունը—մեր արդյունաբերութունը զարգանալ չի կարող: Ընդհակառակը, առանց արդյունաբերության զարգացման, առանց գյուղատնտեսական մեքենաշինութան զարգացման—գյուղական տնտեսութունն առաջ գնալ չի կարող: Ուստի և ձեռք առնելով արդյունաբերության վերելքն ու հետագա զարգացումն արագացնող մի շարք միջոցներ, անհրաժեշտ է միաժամանակ նույնն անել նաև գյուղական տնտեսության նկատմամբ:

Այդ յեղակետ ընդունելով, 14-րդ համագու-

մարը հենտրոնական Կոմիտեյին և ամբողջ կուսակցությանը հանձնարարեց՝ «Աջակցել յեղ առաջ մղել գյուղատնտեսական զարգացումը՝ յերկրագործական կոլտուրան բարձրացնելու իմաստով, սեխնիկական կոլտուրաները զարգացնել, յերկրագործության սեխնիկական բարձրացնել (սրակ-սորիզացիա), գյուղատնտեսությունը ինդուստրիալիզացիայի յենթարկել, հողաշինարարական գործը կանոնավորել՝ ըստ ամենայնի սրաշարակնելով գյուղատնտեսության կոլլեկտիվիստական զանազան ձևերը»:

Մեր յերկրում 22 միլիոն գյուղացիական տնտեսութուններ կան, դրանցից մի քանի միլիոնը չքավոր գյուղացիներինն է, վորոնք չեն կարողանում ծայրը ծայրին հասցնել: Ինչո՞ւ համար: Նրա համար, վոր նրանք չափազանց մանր են և կոոպերացված չեն, վոր նրանք չունեն ինվենտար, աշխատող անասուններ, չունեն մշակելու միջոցներ, չունեն սերմնացու: Իսկ անհրաժեշտ է, վոր մենք ստեղծենք լիովին կոոպերացված ծաղկած գյուղական տնտեսութուն: Մենք պետք է ձգտենք և հասնենք այն վիճակին, վոր գյուղացին ուղիղ և ժամանակին մշակի հողը, վորպեսզի գյուղացու հողի վրա վոչ թե յաբու ձին քարշ գա՝ արորին լծված, այլ վորպեսզի տրակտորը բանի, և տրակտորը պիտի ղեկավարի գյուղացի-տեխնի-

կը: Վորպեսզի արտում հնձի ժամանակ մանգաղով զինված գյուղացու կորացած մեջքը հանքա, այլ կալսող-մեքենաները զբոսնեն. վորպեսզի հացահատիկը յերնի վոչ թե քամին, այլ յերնող մեքենան. վորպեսզի կտավատը ծեծվի վոչ թե ծանր մահակով, այլ հատուկ մեքենայով: Մենք պետք է ձգտենք և հասնենք այն վիճակին, վոր գյուղացին կուշտ լինի, հագնված լինի, զբաղեա լինի. վորպեսզի հա ապրի վոչ թե ծխոտ խրճիթում, անասունների հետ միասին, այլ ընդարձակ, լույս տան մեջ՝ ելեքտրականությամբ լուսավորված:

Ահա մեր խնդիրները մոտակա տասնամյակներին: Բայց ի՞նչպես զբանք լուծել, կյանքում իրականացնել:

Վո՛չ բոլորը միանգամից: Այլ՝ մաս-մաս:

Ամենից առաջ՝ պետք է նախաձեռնել այնպիսի բանի, ինչ մատչելի յե և ներկայումս հնարավոր է անել: Պետք է քչից սկսել: Սկսել նրանից, ինչը հաղթել կարող ենք ներկայումս մեր ունեցած ուժերով ու միջոցներով: Ըստ վորում չպետք է մոռանալ, վոր անհատ գյուղացու համար անմատչելին ու անկարելին—մատչելի ու կարելի կդառնա կոլլեկտիվի համար, գյուղացիների արտելի համար:

Կուսակցության 14-րդ համագումարն իր

բանաձևում ասաց. «Պե՛ս և աջակցել ու առաջ մղել գյուղական և ևնեստրյան զարգացումը»:

Բայց ի՞նչպես: Ի՞նչ ճանապարհներով: Այդ ճանապարհները քիչ չեն: Դրանցից գլխավորներն ու կարևորները համագումարը նիշել է:

Համագումարն ասաց՝ «Անհրաժեշտ է յերկրագործական կոլոսուրան քարճուցնել»: Այդ նշանակում է, վոր պետք է ականջ դնել յերկրագործական գիտության ձայնին: Պետք է հրաժարվել նահապետական յեղանակով աշխատելուց: Պետք է հողի մշակության նոր միջոցներ կիրառել, անցնել բազմադաշտյան յեղանակին, սերմերը մաքրել, ժամանակին հերկել, ցանել: Ահա՛ միայն մի մասը նրանից, ինչ մատչելի յե, հնարավոր է անել ներկայումս, և վորն անսլոյման ավելացնելով բերքը, կավելացնի գյուղացու յեկամուտը:

Տեխնիկական կոլոսուրաները զարգացնել.— Այդ նշանակում է, պետք է ավելացնել թանգարժեք տեխնիկական բույսերի ցանքսը, այն է՝ կտավատի, կանեփի, բամբակի, շաքարաբազուկի, արևածաղկի: Դրանք հացահատիկներից ավելի թանգ են գնահատվում: Դրանք ավելի յեն յեկամուտ տալիս:

Դյուղացիությունը հետզհետե այդ հասկանում է: Այդ մասին վկայում է այն, վոր այժմ զգա-

լի չափով ավելացել ե տեխնիկական կուլտուրաների ցանքսը:

1925 թվին հացահատիկների ցանքսը, 1924 թվին համեմատությամբ, ավելացել ե ընդհամենը 4—5 տոկոս, մինչդեռ կտավատի ցանքսը նույն թվին համեմատությամբ ավելացել ե 18 տոկոս, բամբակինը՝ 30 տոկ., շաքարաբազուկինը՝ 40 տոկ., արևածաղկինը՝ 12 տոկոս:

Հաշվի առնելով այս փաստերը և ցանկանալով գյուղացուն բերքերի բարձրացման խնդրում ոգնության գալ, Հոգժողկոմատը ծրագրել ե հիմնել մանավաճային բույսերը (կտավատ, կանեփ) զարգացնելու համար 450 փորձադաշտ և 1,200 ցուցադաշտ. գետնախնձորի (կարտոֆիլի) — 250 փորձադաշտ և 675 ցուցադաշտ, շաքարազուկի — 80 փորձադաշտ և 20 ցուցադաշտ:

Պետք ե ամեն ջանք գործ դնել՝ մեքենաներ ձեռք բերելու:

Անհատ-գյուղացին չի կարող մեքենա գնել — միջոցներ չկան և տեղ ել չկա մեքենաներն աշխատեցնելու — հողի շերտերը նեղ են: Մեքենան հեշտությամբ ձեռք կբերի արտելը, ընկերությունը, գյուղացիների կողմից: Մեքենայով աշխատելը լավ ե, հարմար և ոգտակար՝ միայն ամբողջ դաշտում և վոչ թե նեղ շերտերում, ուր նա վոչինչ անել չի կարող: Հողը մեքենաներով

մշակել հեշտությամբ կարող ե կոոպերացված գյուղացիությունը, այն գյուղացիությունը, վոր միացած ե գյուղատնտեսական այս կամ այն կոոպերատիվներում:

Անհատ-գյուղացու համար մեքենան ուժից վեր բան ե: Իսկ յեթե ուզում ես մեքենաներով աշխատել, յեթե ուզում ես աշխատանքը թեթեփացնել, յեթե ուզում ես մեծ արդյունք ստանալ, — միացի՛ր՝ կոոպերացված աշխատանք կառարելու համար:

Այդ վերաբերում ե մանավանդ չքավոր գյուղացիներին:

Յեթե միջակ գյուղացին դեռ ելի կարող ե յերկաթե գութան գնել, յեթե յերկու-յերեք միջակ գյուղացիներ միացած ուժերով դեռ ելի կարող են ձեռք բերել յերնող մեքենա (գյուղատնտեսական մյուս մեքենաները միջակ գյուղացին ևս մենակ գնել չի կարող, մատչելի չե), — այդ միանգամայն անկարող ե մենակ անել չունևոր գյուղացին: Ճիշտ ե, ոգտվելով յերկարատև վարկից, չունևոր գյուղացին կարող ե ձեռք բերել յերկաթե գութան, և ուրիշ վոչինչ: Բայց չունևոր գյուղացուն հաճախ պետք ել չի այդ գութանը, քանի վոր նա գուրկ ե աշխատող անասուններից: Իսկ չունևոր ու միջակ գյուղացիների արտելը, ընկերությունը, կողմից, հե-

տգնետե կարող ե ձեռք բերել գյուղատնտեսական մեքենաներ և դրանք լավ ոգտագործել:

Խորհրդային պետութիւնը ամեն միջոց գործադրում ե՝ գյուղացիութեանը գյուղատնտեսական գործիքներ և մեքենաներ հայթայթելու համար: Լայնացվում ե այդ գործիքների ու մեքենաների սեփական արտադրութիւնը. այժմ արդեն ավելի յե արտադրվում, քան պատերազմից առաջ եր: Այժմ արտասահմանից գյուղատնտեսական գործիքներ և մեքենաներ ավելի յեն ստացվում, քան պատերազմից առաջ եր: Ներկայումս մենք մեր յերկրում կազմակերպվում ենք այնպիսի գործիքների ու մեքենաների արտադրութիւն, վորպիսիք առաջ Ռուսաստանում չեյին արտադրվում, այն ե՝ տրակտորներ, տրակտորի խոփեր և այլն: Լենինգրադում «Կարմիր Պուտիլովեց» գործարանը 1925 թվի հոկտեմբերին բաց ե թողել 15 տրակտոր, նոյեմբերին—24, իսկ տրակտորաշինութեան սկզբից՝ ընդհամենը—147 հատ: ԽՍՀՄ բոլոր գործարաններում 1925—26 տնտեսական տարում ծրագրված ե արտադրել 1,750 տրակտոր: Բաց են թողնվում դրամական միջոցներ՝ չունեւոր և միջակ գյուղացիներին արտոնված պայմաններով գյուղատնտեսական գործիքներ հայթայթելու:

1925—26 թվին ծրագրված ե պատրաստե

և տարածել՝ գութան—999,000, ցանող մեքենա—45,000, հնձող—56,000, խոտհար—40,000, տափանող—40,000, ծեծող—35,000, յերնող ուսերմը շոկող մեքենա—103,000, ավելի քան յերեք միլիոն դերանդի, մեկ միլիոն մանգաղ, ընդհամենը—120 միլիոն ուււրու: Բացի դրանից, ընթացիկ տարում յենթադրվում ե գյուղացիութեանը տալ 18,000 տրակտոր: Անցյալ տարի տրված ե 5000 տրակտոր:

Գյուղացիութիւնը գյուղատնտեսական գործիքների և մեքենաների մեծ պահանջ ե հայտնում:

Այն հանգամանքը, վոր անցյալ տարի 5000 տրակտոր ե տարածվել և այս տարի կրկին մեծ պահանջ կա,—այդ ամենալավ ապացույցն ե, վոր յերկրագործութեան մեջ հեղափոխութիւնը սկսվել ե, այդ վկայում ե, վոր գյուղատնտեսական կոոպերացիան (նա տրակտորների գլխավոր գնողն ե) զարգանում ե, վոր գյուղացիութիւնը թողնում ե հողամշակութեան հին ձևերը և անցնում նոր՝ կուլտուրական յեղանակների. այդ ամենը վկայում ե, վոր մեր հողամշակութեան տեխնիկան կամաց կամաց, հետզհետե բարձրանում ե:

«Մեքենան—թեկուզ տրակտորը,—ասաց ընկ. Ռիկովը՝ կուսակցութեան 14-րդ կոնֆերենցիա-

յին իր արած գեկուցման մեջ, — այժմ կարող ե գյուղում լրիվ հեղափոխություն առաջացնել այն իմաստով, վոր յերբ արտադրությունը մեքենաներով ե կատարվում — ավելի ձեռնտու յե դառնում անցնել հողի հասարակական մշակման յեղանակին: Տրակտորը գյուղատնտեսական արտադրական սլոցեսը հեղափոխել կարող ե շատ ավելի մեծ չափով, քան գյուղը յեկած հազար ագիտատորները՝ հողամշակության կոլլեկտիվ ձևերի առավելությունների մասին իրենց արած վերացական ագիտացիայով»:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ 14-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ՝ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Խորհրդային Միության բնակչության մեծամասնությունը կազմում ե գյուղացիությունը: Բանվոր դասակարգն ու նրա կուսակցությունը սոցիալիստական տնտեսություն հարկադրված են կառուցել գյուղացիական յերկրում, ուր կան վոչ պակաս 22 միլիոն գյուղացիական տնտեսություններ, վորոնք միմյանցից անջատ են, իրենց սեփական առանձին շահերով են տարված: Գյուղական տնտեսության արտադրանքը ներկայումս գեոևս գերակշռում ե արդյունաբերության արտադրանքին: Գյուղական տնտեսությունը ավելի ե արտադրում, քան արդյունաբերու-

թյունը: Այդտեղից պարզ ե, վոր առանց գյուղացիության՝ չես կարող սոցիալիստական տնտեսությունն իր ավարտին հասցնել: Խորհրդային Միության բանվոր դասակարգը կարող ե և հետգհետե սոցիալիզմին կանցնի՝ միայն գյուղացիության հետ միասին:

Բայց գյուղացիությունն իր տնտեսական կարողությամբ — միատեսակ չե: Կուլակ (զորբա), միջակ և չունևոր — ահա՝ գյուղացիության գրելավոր խմբակցությունները: Ըստ վորում՝ միջակները մեծամասնություն են կազմում: Արտադրանքի մեծ մասը արտադրում են միջակ գյուղացիների տնտեսությունները: Միջակ գյուղացին հողագործության կենտրոնական դեմքն ե կազմում: Դրանից հետո, թվական կողմից, յերկրորդ խմբակցությունը չունևոր գյուղացիներն են կազմում: Յեվ վերջապես յերրորդ՝ ամենափոքր (3—4%) խմբակցությունը կազմում են կուլակները:

Կուլակը — այդ այն գյուղացին ե, վորը սւնեւալով հնարավորություններ, գնում ե ուրիշի աշխատանքը և այդ աշխատանքի հաշվին ապրում, վորն ապրում ե այնպիսի յեկամուտներով, վորոնց համար քրտինք չի թափում:

Միջակը — այդ այն գյուղացին ե, վորն ապրում ե իր աշխատանքով, վորը տնտեսությամբ

պարապելով և վորևե տեղ ծառայելով՝ բավական միջոցներ ե ստեղծում իր ապրուստի համար և նույնիսկ մի քիչ ել ավելի՝ յե ունենում:

Չունենորը—այդ այն գյուղացին ե, վորն ապրում ե իր աշխատանքով, բայց վորին կերակրելու համար իր տնտեսությունը չի բավականացնում: Չունենորը միշտ ել կարիքի մեջ ե: Այդ վոչ թե նրա համար, վոր նա—ծույլ ե և աշխատել չի ցանկանում, այլ նրա համար, վոր չունենոր գյուղացին մեծ մասով գուրկ ե աշխատելու միջոցներից—նա չունի աշխատող կենդանիներ, գութան, տափան, սերմացու և տնտեսության համար ուրիշ անհրաժեշտ բաներ: Չունենոր գյուղացին ստիպված ե կողմնակի աշխատանք կատարելու—բատրակ վարձվելու կամ իր բանվորական ուժը ծախելու, վորպեսզի իր գոյությունը մի կերպ քարշ տա:

Արդյո՞ք գյուղացիությունը բանվոր դասակարգի հետ մեկ ուղիով պետք ե գնա: Արդյո՞ք գյուղացիության համար ձեռնտու՞լ յե բանվոր դասակարգի հետ միասին դեպի սոցիալիզմ գնալ: Արդյո՞ք գյուղացին դրանից չի՞ փասովի: Այս հարցերի պատասխանը բաժանվում ե մի շարք մասերի:

Պարզ ե, վոր չունենոր գյուղացու, հաճախ ել միջակ գյուղացու աշխատանքի, քրտինքի ու արյան հաշվին ապրող, հարստացող ու ճարպա-

կալվող կուլակին ձեռնտու չե բանվոր դասակարգի ուղիով գնալու:

Այլ ե չունենոր գյուղացու վիճակը: Չունենորի համար միակ ուղին դեպի կուշտ, ազատ, կուլտուրական կյանք,—բանվոր դասակարգի ուղին ե, բանվոր դասակարգի հետ միանալու և նրա յետ միասին դեպի սոցիալիզմ դիմելու ճանապարհն ե: Այդ ճանապարհից դուրս չունենոր գյուղացիությունը իր հավերժ ծանր դրությունից դուրս գալու հնար չունի:

Իսկ միջակ գյուղացին: Ո՞ւմ հետ և ո՞ւր նա պիտի գնա: Յեթե միանա կուլակին—ուրեմն դեպի կապիտալիզմ, դեպի բուրժուալի և կալվածատերերի իշխանությունը, դեպի ճորտություն և ստրկացում: Թե՞ նա պետք ե միանա չունենոր գյուղացիությանն ու բանվոր դասակարգին և դեպի սոցիալիզմ առաջ գնա:

Միջակ գյուղացու համար ո՞ւմ հետ գնալն ե ձեռնտու՞ կուլակների և բուրժուազիա՞յի, թե՞ չունենոր գյուղացիության և բանվոր դասակարգի հետ:

Յեթե նա ընտրի չունենոր գյուղացիության և բանվոր դասակարգի ուղին—դրանով նա գնալու յե այն ճանապարհով, վոր տանում ե դեպի տրակտոր, դեպի յելեքտրական գութան, դեպի սերմանող, հնձող, մանրող, յերնող մեքենաներ:

Այդ այն ուղին ե, վոր տանում ե դեպի այնպիսի մեքենաներ, վորոնք մարդկային աշխատանքը հեշտ և ուրախ են դարձնում: Այդ այն ուղին ե, վորով գնալով, կարելի յե մթերքների մեծ քանակութիւն արտադրել՝ ֆիզիքական աշխատանքի ավելի քիչ սպառումով: Այդ այն ուղին ե, վոր տանում ե դեպի կոոպերացիած գյուղատնտեսական ուժեղ արտադրութեան ստեղծում: Այդ այն ուղին ե, վոր տանում ե դեպի կուշտ, գրազետ, քաղց, հոգս ու հիվանդութիւն չճանաչող գյուղը:

Իսկ յեթե նա միանա կուլակին, կնշանակե նա կգնա այն ճանապարհով, վոր տանում ե դեպի անիծյալ անցյալը, այդ նշանակում ե—վերադարձ դեպի մաշոյ, ծանր և անշնորհակալ աշխատանք, վոր անկարող ե մարդուն կերակրել: Այդ ճանապարհը տանում ե դեպի մի այնպիսի կյանք, ուր մարդը ցամաք հացի կարոտ ե լինում: Այդ ճանապարհը տանում ե դեպի յետ՝ դեպի կալվածատերերի ու կապիտալիստների ճնշող լուծը:

Բայց միջակ գյուղացիութիւնն այդ ճանապարհով չի գնա: Նա կգնա միևնույն ուղիով՝ չքավոր գյուղացիութեան հետ, բանվոր դասակարգի և նրա առաջապահ գնդի—կոմունիստական Կուսակցութեան հետ:

«Յեթե յիսկոր գյուղացին, ամենից առաջ՝

բասրակը,—սալում ե կուսակցութեան 14-րդ համագումարի բանաձեւում,— հանդիսանում ե պրոլետարիատի նեցուկը գյուղում, ապա միջակ գյուղացին հանդիսանում ե յետ պետք ե հանդիսանա նրա հաստատուն դաշնակիցը: 2ի կարելի մի ժողով անգամ մոռանալ, վոր կարխածասիրական հողատիրութեանը փոխարինելու յետ կարխածասիրական հողերը գյուղացիութեանը փոխանցելու, յոռւմիւրների կոմիտեների փառաբանութեան յետ գյուղը կուրակներից ազատելու հետեւանով՝ գյուղացիութեան միջակ խալտը յաջողակեց ուժեղացել եւ յետ վոր այդ խալտերն այժմ կազմում եւ գյուղացիութեան հիմնական զանգվածը: Չունենալով այդ զանգվածը գյուղում վորպէս հաստատուն դաշնակից, այժմ, պրոլետարիատի դիկտատուրան ամրապնդվելուց հետո, չի կարելի սոցիալիզմ կառուցել»:

Բայց վո՞րն ե սոցիալիզմի շինարարութեան հիմնական ճանապարհը գյուղում: Ի՞նչ ճանապարհներով պետք ե գյուղացիութեանը մասնակից անել այդ շինարարութեանը:

«Սոցիալիզմի շինարարութեան հիմնական ուղին գյուղում այն ե,—պատասխանում ե կուսակցութեան 14-րդ համագումարի բանաձեւը,— վորպէսզի գյուղացիութեան հիմնական զանգվածը մասնակից անեն կոոպերատիվային կազմա-

կերպութիւններն յետ ասպակոյնէ արդ կազմակերպութեան սոցիալիստական զարգացումը՝ ոգսագործերով, հաղթահարելով ու արտափսելով նրա կապիտալիստական տարրերը»:

Նշանակում է՝ սոցիալիստական շինարարութեան ուղին գյուղում—կոոպերացիան եւ ինչ չափով վոր գյուղացիութիւնը մասնակցի կոոպերացիային, այն չափով ել նա մասնակցած կլինի սոցիալիստական շինարարութեանը: Ինչ չափով վոր գյուղացիութեան կոոպերացումը աճի եւ կոոպերացիայի աշխատանքը զարգանա, այն չափով ել գյուղում առաջ կգնա սոցիալիզմի շինարարութիւնը:

Բայց գյուղացիութեան հիմնական մասը կազմում է միջակ գյուղացիութիւնը, գյուղատնտեսական արտադրանքի մեծ մասը նա՛յե արտադրում, նա հանդիսանում է հողագործութեան կենտրոնական դեմքը: Ուրեմն սոցիալիստական շինարարութեան հաջողութիւնները գյուղում կախված են նրանից, վոր միջակ գյուղացիները կոոպերացիայի աշխատանքին մասնակցեն: Առանց միջակ գյուղացիութեան—սոցիալիստական շինարարութիւնը գյուղում մտածելի չէ: Այստեղից պարզ է, թե միջակ գյուղացիութիւնը վորպիսի կարեւոր դեր է խաղում:

Յեւ կուսակցութեան 14-րդ համագումարն

իր բանաձեւում ընդգծեց, վոր բոլոր նրանք, ովքեր չեն հասկանում կամ լիովին չեն գնահատում միջակ գյուղացու այդ դերը, նրանք խանգարում են բանվոր գաւազարդի եւ չունեւորի դաշինքին՝ միջակ գյուղացու հետ, նրանք խանգարում են սոցիալիստական շինարարութեանը գյուղում, նրանք վտանգում են սրբութեամբ դիկտատուրան մեր յերկրում:

«Յերե յունեմոր գյուղացիութեանը,—ասաց 14 համագումարը իր բանաձեւում,—հանդիսանում է պրոլետարիատի նեցուկը գյուղում, ապա միջակ գյուղացիութեանը հանդիսանում է յետ պետքի եւ հանդիսանա պրոլետարիատի հաստատումը դաշնակիցը»:

Այստեղից բխում է կուսակցութեան հիմնական անելիքը գյուղում—ամրացնել բանվոր դասակարգի յետ յունեմոր գյուղացիութեան դաշինքի միջակ գյուղացիութեան հետ, կարգ (գոյումն, սովիցկա) հաստատել քաղաքի յետ գյուղի միջեւ:

Բայց գյուղում տնտեսական նոր քաղաքականութեան (նեպի) տարիներում կուլակը հարստացել եւ ուժեղացել է: Գյուղի կուլակային տարրերը հմտորեն են ոգտագործում այն ազատութիւնները, վոր տնտեսական նոր քաղաքականութեան հետեւանքով թույլատրված են: Կուլակը հմտորեն յոգտագործում է ազատ առեւտրի,

հողի կապալի, բանվորական ուժ վարձելու թույլ-
տվութիւնը: Կուլակը, վոր յենթարկվել եր հե-
ղափոխութեան հարվածներին, հետզհետե վտար
ե կանգնում: Նա նորից գլուխ ե բարձրացնում,
հարստանում ե, ճարպակալում: Կուլակն ուզում
ե ինքը քաղաքական ինքնուրույն ուժ դառնալ:
Նա իր ազդեցութեանն ե ուզում յենթարկել չու-
նեոր գյուղացիութեանը ե իր յետեից տանել մի-
ջակ գյուղացիութիւնը: Նա ուզում ե միջակ
գյուղացուն բանվոր դասակարգի դեմ հանել,
կուսակցութեան դեմ, Խորհրդային Իշխանութեան
դեմ: Գյուղում, կուլակութեան աճմանը զուգըն-
թաց, ավելանում են նաե վտանգները: Դրանք
չտեսնել, հաշվի չառնել ե կուլակին ընդդիմա-
դրութիւն ցույց չտալ—անուղղելի սխալ կլի-
նէր:

Բայց կուլակային վտանգը գյուղում ի՞նչ չափով
ե մեծ: Այդ վտանգի դեմ մղելիք կովում արդո՞ք
հարկավոր են առանձնահատուկ միջոցներ—նո-
րից չունեորների կոմիտեներ ստեղծելը, կուլակ-
ներից ազատվելու համար վարչական միջոցների
դիմելը:

Կուսակցութեան 14-րդ համագումարը դրան
տալիս ե վճռական պատասխան,—վո՛չ:

«Պայքարը կուլակային տարրերի դեմ,—հայ-
տաւարեց համագումարը,—պէ՛տ ե մղվի ինչպէս

յունեվորներին կուլակների դեմ կազմակերպե-
լու, այնպէս յեմ պրոլետարիատի յեմ յունեվոր գյու-
ղացիութեան միութեանը գյուղացիութեան մի-
ջակ տարրերի հետ ամրապնդելու ճանապարհով,
փորպէսզի միջակ գյուղացիութեանը պոկվի կու-
լակային տարրերից յեմ այլպիսով վերջնները
չիոյին մեկուսանան»:

«Խոսք չի կարող լինել՝ փոյ յունեվորների կո-
միտեներին, փոյ ռազմական կոմունիզմի ժամա-
նակաշրջանի ճնշման սխեսեմին յեմ փոյ ել կու-
լակներից ազատվելու պրակտիկային վերադառ-
նալու մասին»:

Կուլակութեան դեմ կովելու համար պետք չե
վարչական միջոցներ գործ դնել: Դրանց կիրա-
ռումը կնշանակեր՝ գյուղում բորբոքել դասա-
կարգային կռիվը, պրոլետարիատի ե գյուղա-
ցիութեան միջև զոդումն (սմիչկան) լուծել, մեր
ամբողջ շինարարական աշխատանքը քանդել: Կու-
լակի դեմ պետք ե պայքարել տնտեսական մի-
ջոցներով:

Հարկավոր ե կուլակին խեղդել վոչ թե ֆի-
զիքապես, այլ նրա հետ մրցելով, նրա դեմ տն-
տեսական ֆրոնտում կռիվ մղելով: Հարկավոր
չե կուլակին կտրել, այլ պետք ե նրան հարկե-
րի միջոցով քերթել, հարկավոր չե կուլակի խա-
նութը փակել, այլ պետք ե նրա հանդեպ ուժե-

դացնել ու լայնացնել կոտպերատիվի խանութը: Կուլակի կապիտալներն ու կարողութիւնը վոչ թե պետք է բռնագրավել, այլ պետք է դրանց վրա տուրքերն ավելացնել: Հարկավոր է լայնացնել վարկային ընկերութիւնների ցանցը, վորոնք կարողանային միջակ և չունեւոր գյուղացիներին աժան վարկ տալ, այն ժամանակ միջակ և չունեւոր գյուղացիները կարելք չեն զգա կուլակի ոգնութիւնը դիմելու և նրա ցանցի մեջ ընկնելու: Հարկավոր է կուլակից ավելորդ ինվեստարն ու սերմացուն խլել, վորոնց ոգնութիւնը նա ստրկացնում է կարիքավորներին, այլ պետք է չունեւորներին արտոնյալ պայմաններով սերմացու, հողագործական գործիքներ, լծկաններ հայթայթել:

Պետք է ամրապնդենք չունեւորների դաշինքը — միջակ գյուղացիութեան հետ և վերջինիս մեր յետեից տանենք: Համախմբել չունեւոր գյուղացութիւնը և նրան միացնել կուսակցութեան շուրջը՝ կուլակի հանդեպ, քաղաքականապես մեկուսացնել կուլակին և դիմադրել կուլակի շահագործութեանը — ահա՛ միակ ուղիղ միջոցները՝ կուլակային վտանգի դեմ կռիւն: (Տես եջ 79):

Կուսակցութեան 14-րդ համագումարը ամբողջովին և լրիվ հավանութիւն տվեց կուսակցական 14-րդ կոնֆերենցիայի վորոշումներին՝

գյուղացիական հարցի վերաբերյալ: Այդ կոնֆերենցիայի վորոշումները խոսում էին կապալային իրավունքների լայնացման, բանվորական ուժ վարձելու անհրաժեշտութեան մասին, տնայնագործական արդիւնաբերութեանը ոգնելու մասին, գյուղական տնայնագործներին ու արհեստավորներին արտոնութիւններ տալու մասին, կոտպերացիայի աշխատանքի դարգացման մասին, խորհուրդները աշխուժացնելու մասին, այն մասին, վոր կուլակութեան և գյուղական բուրժուազիայի դեմ մղվող կռիւի սխառեմը պետք է փոխել, նրանց դեմ պետք է կռիւ վոչ թե վարչական ճնշում գործ դնելով, այլ նրանց դեմ տնտեսական պայքար մղելով:

Այս բոլոր վորոշումները մեկ նպատակ ունեւին — խորտակել գյուղական տնտեսութեան զարգացմանը խանգարող արգելքները, արագացնել նրա վերելքը և հետագա աճումը, ամրացնել բանվոր դասակարգի գոգումը (սմիչկա) գյուղացիութեան հետ: Յեւ կուսակցութեան 14-րդ համագումարը շեշտեց, վոր այդ քաղաքականութիւնն արդեն տվել է իր արդիւնքները: Նա հիմնովին բարելավել է դրութիւնը գյուղում, բարձրացրել է պրոլետարիատի և նրա կուսակցութեան վարկը գյուղացիութեան աչքում, ստեղծել է գյուղացիութեանը սոցիալիստական շինա-

րարության մասնակից անելու համար բոլոր պայմանները:

Կուսակցության 14-րդ համագումարը միաժամանակ լիովին հավանություն տվեց Կենտր. Կոմիտեյի՝ 1925 թվի հոկտեմբերին ընդունած վորոշումներին՝ չունևոր գյուղացիության մեջ տանելիք աշխատանքի մասին: Այդ վորոշումները խոսում են չունևորներին նյութական ոգնություն հասցնելու անհրաժեշտության մասին, նիշում են այդ ոգնության ձևերը և առաջ մղում չունևոր գյուղացիությունից առանձին՝ չունևորների խմբեր կամ ֆրակցիաներ կազմելու հարցը:

Ինչո՞ւ էյին անհրաժեշտ Կենտրոնական Կոմիտեյի այդ վորոշումները:

Այդ վորոշումներն ընդունելու անհրաժեշտությունը բացատրվում է մի շարք պատճառներով:

Կուսակցության 14-րդ կոնֆերենցիայի վորոշումներից հետո տեղ-տեղ անհիմն կերպով ձայներ էյին լսվում, վոր Կոմ. Կուսակցությունը չունևորներին մոռացել է, վոր կուսակցությունը չունևորների գլխի վրայով մտադիր է դաշն կնքել միջակ գյուղացիության հետ, վոր նա միջակ գյուղացիության մասին ավելի յե հոգում, քան չունևորների մասին: Նման դատողություններ— անմիտ և վոչ մի բանի վրա չհիմնված դատողություններ ու տրամադրություններ ունեցել

են նույնիսկ գյուղում աշխատող կոմունիստներից վոմանք: Այդ տրամադրությունները անհրաժեշտ եր ցրել այն պատճառով, վոր դրանք վնասում էյին չունևորների համախմբվելուն և նրա՝ միջակ գյուղացիությանը մերձենալու գործին: անհրաժեշտ եր մի ավերոյ աճաւ շեշտել, վոր չունևոր գյուղացիությունը պրոլետարիատի նեցուկն է հանդիսանում գյուղում և վոր կուսակցությունն այն կարծիքի յե, վոր պետք է չունևորների հետ ամենասերտ դաշինք կնքել և վոր կուսակցությունը միջակ գյուղացիության հետ դաշն է կազմում վոչ թե չունևորների գլխի վրայով, այլ չունևորների աջակցությամբ, չունևորների միջոցով և վոր կուսակցություն չպետք է չունևորներին հակադրի միջակ գյուղացիությանը, այլ ընդհակառակը, չունևորներին պետք է համախմբել, նրան մերձեցնել միջակ գյուղացիությանը և չունևորների ու միջակների դաշինքն ամրապնդել:

Բացի այդ, անհրաժեշտ եր նիշել չունևորներին նյութական ոգնություն հասցնելու գործնական յեղանակներ և միջոցներ և դրանք կյանքում ավելի լայն չափերով անցկացնել: Ոգնության այդ միջոցները նիշված են: Այդ միջոցներից մեկն է— չունևորներին ոգնություն հասցնելու համար մի առանձին ֆոնդի հիմնումը: Այդ

Ֆոնդը, 10 միլիոն ռուբլու, արդեն կազմված է։
 Չունեորենքն այդ ֆոնդից կարող են վարկ ստա-
 նալ իրենց տնտեսությունը բարձրացնելու հա-
 մար (անասուններ գնելու, գյուղատնտեսական
 գործիքներ ձեռք բերելու և այլն)՝ շատ ձեռնտու,
 արտոնյալ պայմաններով և յերկար ժամանա-
 կով։ Բացի դրանից, մշակված են մի շարք մի-
 ջոցներ, վորոնք գյուղություն են տալիս չունե-
 վորներին մասնակցելու զանազան կոոպերացիա-
 ներում. ավելացվում են միջոցներ՝ չունեոր գյու-
 ղացիությանը սերմնացու, յերկրագործական գոր-
 ծիքներ, լծկաններ հայթայթելու՝ չունեորների
 համար ձեռնտու պայմաններով, սահմանված են
 արտոնություններ՝ հարկի վճարման, անտառից
 ոգտվելու, հողաշինարարության գործում և այլն։

Խորհուրդների և կոոպերացիաների վարչու-
 թյունների վերընարությունների վերջին կամ-
 պանիան ցույց տվեց, վոր չունեոր գյուղացիու-
 թյունը ցրված է, բաժան-բաժան է, միասին չի
 գործում։ Մինչդեռ կուլակային տարրերը տեղ-
 տեղ միացած և շատ կազմակերպված ելին գոր-
 ծում։ Մի շարք վայրերում չունեոր գյուղացի-
 ությունը կամ բոլորովին դուրս չեր գալիս, նրա
 ձայնը չեր լսվում և կամ դուրս եր գալիս այն-
 քան անկազմակերպ, վոր կուլակային տարրերը
 նրան ճնշում ելին և խորհուրդներում, գավա-

ռակային գործկոմներում, կոոպերատիվների վար-
 չությունների մեջ տեղերը գրավում։

Այդ դրությունը վկայում է, վոր չափազանց
 անհրաժեշտ է ուժեղացնել չունեորներին համա-
 խմբելու և կազմակերպելու աշխատանքը, այդ
 կազմակերպության համար նոր ձևեր նիշել։ Յեվ
 ահա Կենտրոնական Կոմիտեն այդ կազմակեր-
 պության համար յերկու ձև նիշեց։ Այն է՝ չու-
 նեորների հատուկ ժողովների և՛ խորհուրդներում,
 գավառակային գործկոմներում, կոոպերատիվնե-
 րի վարչությունների մեջ՝ խմբակցությունների
 կամ ֆրակցիաների կազմակերպում։

«Չունեոր գյուղացիության խմբակցություն-
 ներ կազմակերպելու լոզունգը—ասաց ընկեր
 Ստալինը իր գեկուցման մեջ—անհրաժեշտ եր՝
 վերջ տալու չունեորների բաժան-բաժան վիճա-
 կին և նրան հնարավորություն տալու՝ կոմու-
 նիստների ոգնությամբ կազմելու ինքնուրույն
 քաղաքական մի այնպիսի ուժ, վոր պրոլետա-
 րիատի համար մի կազմակերպված նեցուկ լինի
 գյուղում կուլակության դեմ կռվելու, միջակ
 գյուղացիությունը մեր կողմը գրավելու համար։
 Պետք է լոզունգ տալ չունեոր գյուղացիությանը,
 վորպեսզի նա վերջապես իր սեփական վոտքե-
 րի վրա կանգնի, վորպեսզի նա կոմունիստական
 կուսակցության և պետության ոգնությամբ կազ-

մակերպվի և խորհուրդների, կոոպերացիայի, գյուղկոմների ասպարիզում ու գյուղական հասարակայնության ուրիշ բոլոր ասպարեզներում սովորի կուլակության դեմ կռվել, բայց կռվել վո՛չ թե Պետական Գաղաքական Վարչությանը (ԴՊՎ) դիմելու ճանապարհով, այլ քաղաքական պայքարի միջոցով, կազմակերպված պայքարի միջոցով»:

Բայց չունենոր գյուղացիության հատուկ ժողովներ կազմելիս, չունենորների խմբակներ կազմակերպելիս—չունենորին յերբեք չպետք է հակադրել միջակ գյուղացուն: Ընդհակառակը, կուսակցության գլխավոր խնդիրը կայանում է նրանում, վոր նա համախմբի չունենորներին ու միջակներին, նրանց միջև ամուր դաշինք կնքի՝ կուսակցության և Խորհրդային Իշխանության թշնամիների հանդեպ:

«Մենք չպետք է մոռանանք,—ասաց համագումարում ընկ. Մուրտուզը,—չունենորների ներկա ծանր դրությունը և պետք է պայքարենք նրանց շահերը մոռացության տալու դեմ ու միաժամանակ աջակցենք չունենորների կազմակերպման գործին: Մենք պետք է անշեղ կռիվ մղենք կուլակության դեմ, կուլակային վտանգի դեմ, կուլակին չեզոքացնելու համար, կուլակին դուրս խրկելու տնտեսական և քաղաքական այն

դիրքերից, վոր նա զեռևս գրաված ունի գյուղում: Մենք պետք է ձեռնարկենք գյուղի տնտեսական (կոոպերատիվները) և քաղաքական (խորհուրդները) որդաններում (վորոնք մենք այժմ աշխուժացնում ենք) համախմբել վո՛չ միայն չունենոր, այլև միջակ գյուղացիությունը:

Միջակ գյուղացուն կուլակից անջատել, յունեվորներին կուսակցության շուրջը խմբել յեվ, միաժամանակ, դաշինք ստեղծել յունեվոր յեվ միջակ գյուղացիների միջեվ—դրանում է կուսանում կուսակցության կենտրոնական խնդիրը»:

ՄՍՍՍՍՆԵՐԻ ԱՆՏԻՎՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՄԸ

Հեղափոխության տարիներում բանվորա-գյուղացիական մասսաները կուլտուրական և քաղաքական տեսակետից չափազանց առաջ են գնացել: Հեղափոխությունը նրանց աչքերը լայն բացեց: Հեղափոխությունը գյուղացիությանը շատ այնպիսի բաներ սովորեցրեց, վոր նա առաջ չգիտեր և չեր ել կարող գիտենալ: Հեղափոխությունը գյուղացիության մեջ բազմաթիվ նոր շահեր զարթեցրեց:

Յեթե մեր օրերի գյուղացիությունը համեմատելու լինենք մինչ-հեղափոխության ժամանակի գյուղացիության հետ,—ապա մենք նրանում ամեն տեսակետից հսկայական փոփոխություն կգտնենք:

Գյուղացիութիւնը հեղափոխութեան տարիներում առաջ ե գնացել: Նա այժմ ավելի գրագետ ե— թե կարդալ-գրելու իմաստով և թե քաղաքա- կան, հողագործական և այլն գրագիտութեան ի- մաստով: Մի խոսքով, գյուղացիութիւնն այժմ շատ ավելի կուլտուրական ե դարձել, քան հե- ղափոխութիւնից առաջ եր:

Գյուղացիութիւնը մասնակցում ե պետու- թեան կառավարութեան գործում: Գյուղացիու- թիւնը, բանվորական դասակարգի և նրա կու- սակցութեան—կոմունիստական կուսակցութեան հետ միասին և վերջինիս ղեկավարութեամբ, ամ- րապնդում ե իր խորհրդային պետութիւնը: Գյու- ղացիութիւնն իր տնտեսութիւնը, իր կենցա- ղը, իր կյանքը նոր ձևով վերակազմում ե:

Գյուղացիութիւնը, իր տնտեսութիւնն ու- ժեղացնելու, իր տնտեսական դրութիւնը բարե- լավելու հետ միասին՝ հասարակական մեծ աւ- տիվութիւն ե յերեւան հանում: Գյուղացիութիւնն աշխատում ե խորհուրդներում և սրանց կից սեկցիաներում, դատարաններում, կոոպերացիա- ներում, գյուղացիական կոմիտեներում, հասա- րակական բազմաթիւ կազմակերպութիւններում: Գյուղացիութիւնը հսկայական հետաքրքրութիւն ե ցույց տալիս դեպի խորհրդային Խճանութեան զանազան նախաձեռնութիւնները:

Գյուղացիութեան հասարակական աւտիվու- թեան աճման շնորհիւ՝ գյուղխորհուրդների, գյու- ղացիական կոմիտեների, կոոպերացիաների աշ- խատանքը աշխուժանում ու բարելավվում ե:

«Պրոլետարիատը յեւ լորս կուսակցութեանը, — ստաց 14-րդ համագումարը, — պէտք ե ոգտագոր- ծելն այդ աճումն այն նպատակով, վոր աւելի՛ մեծ յափով մասնակցութեան գրաւելն սոցիալիստա- կան շինարարութեան պրոլետարի կողմը՝ բոլոր ժրոհներում, ինչպէս նայել պէտքսան ապա- րատի բարոկրատիզմի դեմ պայքարելու հա- մար»:

«Համագումարը մի անգամ յեւս բնորոշում ե, վոր չի կարելի աշխրան պայմաններում աւ- րացնել պրոլետարիատի դիկտատուրան ռազմական կոմունիզմի յեւ վարչական ձևումն մեքոյնե- րով. կոոպերացիան չի կարելի կառուցանել այն պայմաններում, յերբ մա կառավարական չի, յերբ բնտրական մարմինները հաշիւ չեն տալիս բնտրողներին, յերբ բաժնետերերը վստահութեան յունեն այդ մարմինների վերաբերութեանը. յեւ վոր խորհուրդների աճումը յեւ լորսն ունեցած կայր աշխատարար բնակչութեան շայն շրջանե- րի հետ՝ հանդիսանում ե կուսակցութեան յեւ խոր- հրդային Խճանութեան հետագա աւրոյդ աշխա- տանքի նախապայմանը»:

Ինչ են ասում կուսակցութեան 14-րդ համագումարի այս վորոշումները: Այս վորոշումներն ասում են, վոր անհրաժեշտ է ԽՍՀՄ աշխատավոր բնակչութեան ավելի և ավելի շատ մասսաներ մասնակից անել մեր պետութեան շինարարութեանը:

Մեր պետութեանը կառուցվում է աշխատավոր մասսաների միլիոնավոր ձեռքերով: Քանի շատ այդպիսի միլիոններ մասնակցեն մեր շինարարութեանը, դա այնքան ավելի՛ հաջող, ավելի արագ առաջ կգնա: Ուստի և մասսաների աճող ակտիվութիւնը վո՛չ թէ պետք է ճնշել, այլ, ընդհակառակը, պետք է խրախուսել, դրանց լայն ընթացք տալ և դեպի Խորհրդային հունը ուղղել: Վո՛չ թէ հրահանգել, այլ ղեկավարել: Վո՛չ թէ հարկադրել, այլ համոզել: Ընտրական որդանների (խորհուրդների, գյուղացիական կոմիտեների, կոոպերատիվների) համար չպետք է բնակչութեան վզովը թեկնածուներ փաթաթել, այլ թող ինքը բնակչութիւնը ընտրի նրանց, ում հավատում է, ում ճանաչում և գնահատում է: Պետք է պարտավորեցնել, վոր ընտրական որդանները իրենց աշխատանքի մասին հաշիվ տան ընտրողներին: Գյուղացիութեան ակտիվ մասին պետք է մասնակից անել խորհուրդների, կոոպերացիայի, գյուղկոմների, կամավո-

րական ընկերութիւնների աշխատանքին: Ահա գյուղացիութեան ակտիվութեան աճման հետ կապված այն խնդիրները, վոր դրված են կուսակցութեան առաջ:

Բայց չպետք է մոռանալ, վոր ԽՍՀՄ աշխատավոր մասսաների ակտիվութեան աճմանը զուգընթաց աճում է Խորհրդային Իշխանութեան բնակչութեան նաև թշնամի տարրերի ակտիվութիւնը: Քաղաքում աճում է նեպմանի, մեղաշահականութեան, բուրժուական ինտելիգենցիայի ակտիվութիւնը, իսկ գյուղում — կուլակութեան: Քաղաքի բուրժուազիան փորձում է միանալ կուլակութեան հետ: Նրանք միասին ցանկանում են ազդել և իրենց յետևից տանել միջակ գյուղացիութիւնը: Նրանք ցանկանում են գյուղացիական մասսաների աճող ակտիվութիւնն իրենց նպատակների համար ոգտագործել, դեպի իրենց հունը ուղղել: Բայց այդ չի աջողվի մեր թշնամիներին:

Աշխատավոր գյուղացիութիւնը հեղափոխութեան տարիներում այնքան է առաջ գնացել, վոր նա արդեն կարողանում է ճանաչել, թէ ով է իր բարեկամը և ով — թշնամին, և թէ ինքը ում հետ պետք է մեկ ճանապարհով գնա — բանվոր դասակարգի և նրա կուսակցութեան հետ, թե՞ նեպմանի և կուլակի հետ: Չունեոր է միջակ

գյուղացիները կգնան բանվոր դասակարգի հետ միասին՝ կառուցելու իրենց պետութիւնը: Կոմունիստական կուսակցութիւնը իր յետեւից կտանի բանվոր դասակարգը և աշխատավոր գյուղացիութիւնը: Կոմունիստական կուսակցութիւնը կդեկլարի սոցիալիստական շինարարութեան գործը մեր յերկրում: Կուսակցութիւնն ամեն ինչ կանի, վորպէսզի Խորհրդային Միութեան աշխատավոր բնակչութեան ամենալայն խավերը մասնակից լինեն սոցիալիստական շինարարութեան գործին: Իսկ այդ իր հերթին լավագույն ընդդիմադրութիւնը կլինի նոր բուրժուաի և կուլակի աճող ախտիվութեան հանդեպ:

Ինքնին հասկանալի չէ, վոր Կոմունիստական կուսակցութիւնը, ազատութիւն տալով ու խրախուսելով գյուղացիութեան նախաձեռնութիւնն ու ախտիվութիւնը, ամեն ինչ կանի՝ բանվորական մասսաները և նրանց կազմակերպութիւնները — արհեստակցական միութիւնները — աշխուժացնելու, համախմբելու, նրանց ախտիվութիւնն ելլալով բարձրացնելու:

«Արհեստակցական միութեանները, — ասաց կուսակցութեան 14-րդ համագումարը, — մեզ մոտ հանդիսանում են մասնաշաղկապ կարեւորագոյն կազմակերպութեան, վորոնք համարյա ամբողջովին ընդգրկում են մեր միութեան բնակիչներին»:

«Մեր արհեստակցական Միութեանները պէտք չիկեն շինարարութեան, նախաձեռնութեան, ակտիվութեան, բնակչական մասնաւոր համախմբելու դպրոցներ, նրանց բոլոր կազմակերպութեաններին դպրոցներ, այնպիսի դպրոցներ, վորոնք աշխատանքային ակտիվ յետ միութեան մասնակց անեն սոցիալիզմի շինարարութեան գործին, կոչնորայի բարձրացման ծառայող, բոլորակողմ աշխատանքային կազմակերպութեաններին դեմ պայքար մղող դպրոցներ, մի հոսքով — կոմունիզմի իսկական դպրոցներ»:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱ

«Պրոլետարիատի յետ գյուղացիութեան մասնաշաղկապ կազմակերպութեաններին աշխուժացման վերաբերյալ այդ ամբողջ աշխատանքը հարկ յեղած կերպով անցկացնելու համար — ասված է 14-րդ համագումարի բանաձեռնում — անհրաժեշտ է, վոր այդ կազմակերպութեաններին ղեկավարող ուժը, այսինկէ՛ն Կոմունիստական կուսակցութեանը, իր բոլոր բաղկացուցիչ մասերով, կանգնէ հետեւիդական ներկուսակցական դեմոկրատիայի ճանապարհի վրա»:

Այդ նշանակում է, վոր անհրաժեշտ է բարձ-

րացնել կուսակցական լաշն մասսաների ակտիվությունը, նրանց մասնակից անել կուսակցական քաղաքականութեան կարեւորագույն հարցերի քննութեան և վորոշման գործին: Անհրաժեշտ է հետևողականորեն անցկացնել կուսակցական ղեկավարող որգանների ընտրությունը: Ահա վարող աշխատանքի համար առաջ քաշել նոր ուժեր: Կուսակցական ակտիվը լաշնացնել: Հին կադրին ոգնութեան գալու համար՝ կուսակցական նոր կադրեր պատրաստել: Անհրաժեշտ է բարձրացնել կուսակցութեան անդամների տեսական մակերևութը և գործնական կարողութեանները աստիճանը: Անհրաժեշտ է կուսակցութեան ամենալաշն շարքերում տարածել Լենինի ուսմունքի հիմունքերը:

Կոմունիստական կուսակցութեանը Խորհրդային պետութեան ղեկավարող ուժն է հանդիսանում: Կուսակցութեանը կազմակերպում, ուղղութեան է տալիս, ղեկավարում է: Կուսակցութեանը մեր ամբողջ շինարարութեան հոգին, ուղեղն է հանդիսանում: Կուսակցութեան անդամը— թե զազգահի քով կանգնած, թե արորի յետեից գնացող, թե շարքային և թե պատասխանատու պաշտոն կատարող անդամը, մի խոսքով՝ ամեն կոմունիստ, ուր էլ նա աշխատելիս լինի,— իր գործը պետք է վոչ թե վատ, այլ ավելի լավ գիտե-

նա, քան նման աշխատանք տանող անկուսակցականները: Կոմունիստը պետք է գիտենա և տեսնի, թե իր կուսակցութեանն ուր է գնում ու տանում բանվոր դասակարգին ու գյուղացիութեանը: Շրջապտույտներում իրեն չպետք է կորցնել, այլ պետք է ուղիղ ճանապարհը ցույց տալ ուրիշներին. արված հարցի առաջ ծուղակի մեջ չընկնել, այլ պետք է կարողանալ դրան կոմունիստական պատասխան տալ: Կուսակցութեան անդամը պետք է այդ գիտենա և կարողանա անել: Ահա թե ինչու այնքան անհրաժեշտ է, մանավանդ ներկա շրջանում, կուսակցականների մտավոր մակարդակը բարձրացնել— թե տեսական և թե գործնական ուսում ձեռք բերել:

«Անհրաժեշտ է,— ասվում է 14-րդ համագումարի բանաձեւում,— բարձրացնել կուսակցության ակտիվ փորակը, մասնավորապես— ևրսետարանական մակերեսնորը: Անհրաժեշտ է կուսակցության ակտիվաշն շարքերում տարածել Լենինի ուսմունքի հիմունքները»:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՄԸ ՅԵՎ ՄԻՍՅԱ-
ԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Համագումարը,— ասվում է բանաձեւում՝ կուսակցության ակտիվ մասին,— անհրաժեշտ է համարում տիրապետող ուժի ակտիվացումը և

խաղախաղանքայն, վորն ուղղված չիլի կուսակցական կազմակերպչութեան վորակային կազմի բարձրացման, բանվորներին ամբողջական կուսակցութեան մեջ գրավելու յորդեմնական կուսակցական կորիզի տեսակարար կշիռը շարունակ բարձրացնելու կողմը»:

Ինչու՞նք ե կայանում համագումարի այս վորուշումները ելուծելու:

Կուսակցութեան կազմի վորակը բարձրացնել: Կուսակցութեան մեջ առնել բանվորների ել ավելի մեծ քանակութիւն ե հենց դրանով կուսակցութեան մեջ ավելացնել պրոլետարական կորիզը: Համագումարը դեմ ե կուսակցութեան չափազանց ուռճացումին: Կոմունիստական կուսակցութիւնը պետք ե մնա վորպէս բանվորական դասակարգի ավելի գիտակից ե կազմակերպված՝ առաջապահ գունդը: Համագումարը մերժեց բանվորներին կուսակցութեան մեջ մասնաշաղկապ ընդունելու առաջարկը: Համագումարը կողմնակից ե՝ շարունակ, բայց հետզհետե ավելացնել կուսակցութեան մեջ պրոլետարական կորիզը: Համագումարը կողմնակից ե կուսակցութեան մեջ ընդունել այն գյուղացիներին, վորոնք խորհրդային կամ հասարակական աշխատանքում ակտիվութիւն են ցույց տվել ե ապացուցել իրենց անձնավորութիւնը դեպի պրոլետարական հեղա-

փոխութիւնը, բանվոր դասակարգը ե դեպի նրա կուսակցութիւնը:

Համագումարը նույնիսկ հնարավոր համարեց բանվորներին ե գյուղացիներին կուսակցութեան մեջ ընդունելու պայմանները դյուրացնել: Առաջ կուսակցութեան մեջ ընդունվող բանվորից պահանջվում եր ներկայացնել 3 յերաշխաւորութիւն՝ յեռամյա ստաժով, իսկ այժմ՝ միայն 2 (յերկու) յերաշխաւորութիւն՝ յերկամյա ստաժով: Իսկ արդյունաբերական բանվորների ու սև աշխատանք կատարող բանվորների համար, վորոնք անդադար վարձու ֆիզիքական աշխատանքով են զբաղված, այժմ պահանջվում ե կուսակցութեան 2 անդամի յերաշխաւորութիւն՝ միամյա ստաժով: Յեթե առաջ, կուսակցութեան մեջ ընդունվելու համար, գյուղացիներից պահանջվում եր կուսակցութեան 3 անդամի յերաշխաւորութիւն յեռամյա ստաժով, այժմ արդեն բավական ե ներկայացնել յերեք յերաշխաւորութիւն յերկամյա ստաժով:

Կոմունիստական Կուսակցութիւնը հանդիսանում ե մի այնպիսի կուսակցութիւն, վորը ղեկավարում ե Խորհրդային միութեան շինարարութեան բոլոր բնագավառները ե Խորհրդային պետութեան քաղաքականութիւնը: Կոմունիստական կուսակցութիւնը հանդիսանում ե կազ-

մակերպող, ուղղություն տվող, ղեկավարող ուժը մեր պետութեան մեջ: Այստեղից պարզ է, վոր Կոմունիստական Կուսակցութիւնը իր ղեկավարող դերը հաջող կատարել կկարողանա միայն այն ժամանակ, յերբ նա միաձուլ, համամիտ և կարգապահութեանը խիստ հոտեող Կուսակցութիւն կլինի:

Կոմունիստական Կուսակցութիւնը այդպես յեղել է և է: 14-րդ համագումարն այդ միանգամ ևս ընդգծեց: Համագումարը Կենտրոնական Կոմիտեյին հանձնարարեց վճռական պայքար մղել Կուսակցութեան միասնականութիւնը ջլատող ամեն տեսակի փորձերի դեմ, վոր կողմից և ում ձեռքով ել անվում լինին դրանք:

ՏԱՐԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Կուսակցութեան 14-րդ համագումարի աշխատանքներում կենտրոնական տեղ էյին բռնում ԿԿ զեկուցումն իր աշխատանքի մասին և դրա շուրջը տեղի ունեցած վիճաբանութիւնները: ԿԿ զեկուցման առթիւ լրացուցիչ զեկուցում արեց ընկ. Զինովկը: Այդ զեկուցումների, ինչպես նաև ընկ. Զինովկի լրացուցիչ զեկուցման բանաձևը ընդունվեց վոչ միաձայն: Բանաձևին ձայն տվին 559 պատգամավոր, իսկ դեմ էյին՝ 65: Ծագում են այսպիսի հարցեր—ինչո՞ւ համար և ո՞ւմ եր

պետք լրացուցիչ զեկուցումը ԿԿ հաշվետվութիւնից հետո: Ինչո՞ւ բանաձևը ընդունվեց վոչ միաձայն:

Լրացուցիչ զեկուցումը դրվեց Լենինգրադի կազմակերպութեան պատգամավորների պահանջմամբ: Պատգամավորների այս խումբը մի շարք հարցերում և մի շարք մոմենտների գնահատութեան խնդրում համաձայն չեր համագումարի մեծամասնութեան հետ: Դրա համար ել նա բանաձևի դեմ քվեարկեց:

Բայց ի՞նչ հարցերի մասին էյին տարաձայնութիւնները: Այդպիսի հարցեր մի քանիսն էյին: Առաջին—Սոցիալիզմի շինարարութիւնը մեր յերկրում: Յերկրորդ—Տնտեսական քաղաքականութեան մասին: Յերրորդ—Գյուղացիութեան մասին: Չորրորդ—Ներկուսակցական շինարարութեան մասին:

Այս բոլոր հարցերը հսկայական նշանակութիւն ունեն Կուսակցութեան և մեր յերկրի կյանքում: Ահա թե ինչու այնպես կենդանի, տաք, յերբեմն ել փոթորկալից էյին անցնում վիճաբանութիւններն այդ հարցերի շուրջը:

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ՅԵՐԿՐՈՒՄ

Մեր յերկրում հնարավոր է սոցիալիզմը լրիւ կառուցել, մեր յերկրում սոցիալիզմի շենքը աւարտել:

Լենինը, նրա հետ միասին նաև մեր ամբողջ կուսակցութիւնը ընդունում եւ շարունակում եւ ընդունել, վոր Խորհրդային իշխանութիւնն ունի այն բոլոր անհրաժեշտ պայմանները, վոր հարկավոր են լրիվ սոցիալիստական հասարակութիւն կառուցելու եւ այդ կառուցումը ավարտելու համար, եւ վոր մենք սոցիալիզմ կառուցում ենք եւ մեր յերկրում սոցիալիզմի շենքը կավարտեք:

Մենք մեր յերկրում կկարողանանք սոցիալիզմի կառուցումը ավարտել, յեթե մեզ իր զինվորական միջամտութեամբ, զինվորական ինտերվենցիայով չխեղդեն կապիտալիստական աշխարհը, վորը դեռևս բավական ուժեղ եւ Խորհրդային Միութիւնից: Մենք կդիմանանք մինչև միջազգային պրոլետարական հեղափոխութեան հաղթանակը՝ յեթե Արևմուտքի բանվոր դասակարգը մեզ աջակցի, յեթե նա թույլ չի տա Խորհրդային Միութեան կործանումը:

Իսկ ոպողիցիան ընդունում եր, վոր մեր յերկրում սոցիալիզմ կառուցել կարելի յե, բայց այդ կառուցումը մինչև վերջ հասցնել-ավարտել չի կարելի՝ մեր տեխնիկական եւ տնտեսական հետամնացութեան պատճառով: Շուտ թե ուշ՝ մենք չենք դիմանա, մենք կխորտակվենք, յեթե Արևմտեան Յեվրոպայի պրոլետարիատը սոցիալիստական հեղափոխութիւն չկատարի՝ եւ իր հա-

րուստ տեխնիկայով մեզ ողնութեան չհասնի:

Ահա ոպողիցիայի այս հայացքների հետ չհամաձայնեց 14-րդ համագումարը, վոր ամբողջ կուսակցութեան հայացքներն ու կամքն եր արտահայտում:

Ճիշտ ե, մեր յերկիրը—հետամնաց ե, ցածր տեխնիկա ունի: Մեր ֆաբրիկաներն ու գործարանները վատ են կահավորված: Այդ կահավորութիւնը մեծ մասով արտասահմանից ենք ստացած: Մեր արդյունաբերութիւնը յետ ե մնում, ասենք, Անգլիայի, Գերմանիայի արդյունաբերութիւնից՝ թե կահավորման (մեքենաների եւ այլն) վորակով ե թե աշխատանքի թափով:

Յետամնաց, տեխնիկայի կողմից թույլ այդ արդյունաբերութիւնը մենք հին հասարակարգից ստացել ենք միանգամայն ավերված դրութեամբ: Բայց այդ մենք կարգի գցեցինք: Արդյունաբերութիւնը վտաքի կանգնեցրինք: Նրա արտադրանքն արդեն մոտ ե մինչպատերազմյան չափերին: Մենք առաջ կգնանք: Մենք կկառուցենք մեր խորհրդային նոր ֆաբրիկաներն ու գործարանները: Մենք դրանք կկահավորենք գիտութեան վերջին խոսքի համաձայն:

Մենք մեր յերկրում կառնադրենք Վաքրիկայի յեղ գործարանի համար անհրաժեշտ կահավորոթյուն (մեքենաներ եւ այլն) ե մի քանի բան

կշարունակենք արտասահմանից ստանալ: Իսկ ի՞նչ: Արտասահմանից մենք մահնից առաջ բերել կտանք այնպիսի մեքենան՝ և դադգահներ, վորոնց ոգնությամբ մենք կկարողանանք արտադրել մեր ֆաբրիկաների ու գործարանների համար մեքենաներ ու դադգահներ: Ճիշտ ե, մեր արտադրությունը դանդա՛ղ առաջ կգնա, բայց—առաջ կգնա: Մենք աստիճանաբար մեր յերկիրը՝ ֆաբրիկաների և գործարանների կահավորությունը դրսից ստացող մեր յերկիրը՝ կդարձնենք մի յերկիր, վոր կարտագրել՝ այդ անհրաժեշտ կահավորությունը: Մենք կբարձրացնենք մեր արդյունաբերության տեխնիկան, կայնացնենք նրա աշխատանքի թափը: Մենք շատ ավելի կգարգացնենք ու առաջ կմղենք գյուղական տնտեսությունը և այդ կփոխադրենք կոոպերացիայի ռելաների վրա:

Խորհրդային Միության տնտեսությունը կամաց-կամաց, հետզհետե, բայց հաստատ առաջ կգնա: Մենք տեխնիկայի հետամնացությունից չենք խորտակվի: Մենք կկառուցենք սոցիալիզմ և այդ սոցիալիզմի շենքը մեր յերկրում կավարտենք: Դրան յերաշխիք ե—մեր տնտեսության՝ ամենքին ակնհայտ աճումը:

Մենք մեր յերկրում սոցիալիզմ կկառուցենք և սոցիալիզմի շենքը կավարտենք, յեթե

խորտակման մասին բացականչություններ արձակելու փոխարեն մենք ամրապնդենք Խորհրդային Միության արտաքին և ներքին ուժը: Մենք կամրապնդենք բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիության հետ, կգարգացնենք արդյունաբերությունը, առաջ կհրենք գյուղական տնտեսությունը, գյուղացիության ավելի ու ավելի մեծ խավերին մասնակից կանենք կոոպերացիային—յեթե վոր հետզհետե ճնշենք, նեղենք մասնավոր կապիտալի գործնեյության դաշտը:

Մենք մեր յերկրում սոցիալիզմ կստեղծենք, մենք մեր յերկրում սոցիալիզմի շենքը ավարտել կկարողանանք, յեթե Արևմուտքի պրոլետարիատը իրենց յերկրների բուրժուազիաներին թույլ չտա Խորհրդային Միությունը կործանելու: Իսկ յեթե Արևմուտքի պրոլետարիատը մոտակա տասնյակ տարիներում շատ ավելին անի, յեթե նա հեղափոխություն կատարի, իշխանությունն իր ձեռքն առնի, մեզ տեխնիկական ոգնության հասնի,—այն ժամանակ սոցիալիզմի շինարարությունը մեր յերկրում անչափ արագ քայլերով առաջ կգնա:

14-րդ համագումարը վճռականապես դեմ յելավ ուղղիցիային և ժխտեց նրա հայացքները՝ մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու հարցում: Ուղղիցիայի հայացքները սխալ են և վնասակար:

Նրանք հիմնովին չեն համապատասխանում իրականությանը, վորը Խորհրդային Միության տնտեսության կարող աճման մասին և վկայում, նրանում սոցիալիստական տարրերի գերակշռման մասին և վկայում:

Կուսակցության 14-րդ համագումարը հայտարարեց—«Մեր յերկիրը—սրոյեւսիսի դիկսասուրայի յերկիրը—բոլոր անհրաժեշտ պայմաններն ունի՝ յիշ սոցիալիստական հասարակութիւն կառուցելու յիշ սոցիալիզմի շենքի աշարհելու համար: Համագումարը ընդունում և, վոր սոցիալիստական շինարարութիւն հաղթանակի համար մղվող կռիվը ԽՍՀՄ մեջ՝ մեր կուսակցութեան հիմնական խնդիրն և հանդիսանում»:

Համագումարն ընդունում և, վոր այդ խնդիրը վճռելու անհրաժեշտ պայմաններից մեկն և հանդիսանում—պայքարել թերահավատութեան դեմ—նրանց դեմ, վորոնք չեն հավատում, վոր սոցիալիզմի գործը մեր յերկրում հաջողութիւն կունենա:

Սոցիալիստական շինարարութեան հարցերի մասին ահա թե ինչ և ասում «Գյուղացիական թերթը» («Крестьянская газета»)՝ 14-րդ համագումարի վորոշումների առթիւ:

«Սոցիալիզմի շինարարութեան գործը և՛ և պետք և լինի յուրաքանչյուր բանվորի ու գյու-

ղացու գործը: 14-րդ համագումարի վորոշումներում ամենակարեւորն այն և, վոր ցույց և տալիս, թե ի՞նչ գործնական բաներից և կազմվում սոցիալիզմի շինարարութիւնը:

Դարձնել մեր յերկիրը այնպիսի մի յերկիր, վորը կարողանար արտադրել մեքենաներ վոչ թե վատ, այլ ավելի լավ հատկութեամբ, քան այդ անում և կապիտալիստական պետութիւնը, ուժեղացնել մեր պետական ձեռնարկութիւնները—հենց այդ նշանակում և՛ մեր յերկրում սոցիալիզմ կառուցել:

Ստեղծել վոսկու, յերկաթի, քարածուխի ու գերմներ (պաշար), վորպեսզի մեր տնտեսութեան մեջ խուսափած լինինք ամեն տեսակի անհարթութիւններից,—հենց այդ նշանակում և՛ մեր յերկրում սոցիալիզմ կառուցել: Յուրաքանչյուր գյուղացի դիտե, վոր նրա տնտեսութիւնը կարող և հաստատուն լինել միայն այն դեպքում, յերբ նա թեկուզ մի փոքրիկ պաշար ունի—այդպիսի պաշարներ պետք և ունենա նաև պետութիւնը: Այն ժամանակ աշխատանքը տնտեսութեան բոլոր բնագավառներում առաջ կգնա առանց վորեւէ ընդհատումների:

Սովորել՝ տնտեսաբար աշխատել, այնպես, վորպեսզի վերադիր ծախքերը ավելի քիչ լինեն, քան այդ՝ կապիտալիստների մոտ և՛ վորպեսզի

պետական ապարատն ավելի աժան նստի, քան այդ՝ կապիտալիստների և կալվածատերերի մոտ եւ լինել այնպիսի տնտեսողներ, վորոնք կարողանում են տնտեսած ուրբիւններից ժողովրդական բարեկեցութիւն ստեղծել—հենց այդ նշանակում ե՛ւ մեր յերկրում սոցիալիզմ կառուցել:

Զարգացնել կոոպերացիան այնպես, վորպես զի նա կարողանա ոգնել չունեւոր և միջակ գյուղացիներին վորքի կանգնելու, վորպեսզի կոոպերացիայում առանձին մասնավոր շահը շահկապի ընդհանուր շահի հետ—հենց այդ նշանակում ե՛ւ գյուղը սոցիալիզմի ռելսների վրա փոխադրել: Կոոպերացիայի միջոցով գյուղացիական տնտեսութիւնը կապել քաղաքի արդյունաբերութիւն հետ առանց միջնորդների, առանց սպեկուլյանտների,—հենց այդ նշանակում ե՛ւ գյուղը մոտեցնել սոցիալիզմին:

Ավելացնել քանակը և լավացնել հատկութիւնն այն մեքենաների, վորոնք գյուղ են ուղարկվում, սովորել մեքենաներից ոգտվել համայնորեն, փոխարինել գութանը տրակտորով—հենց այդ նշանակում ե՛ւ գյուղում հիմնել հասարակական-սոցիալիստական տնտեսութիւն:

Յերբ կոմունիստը հրամանատարի և մեծավորի դերից ե՛լ ավելի յե դառնում հասարակական կազմակերպութիւն ղեկավար, ուժեղացող

սոցիալիստական շինարարութիւն առաջնորդ ու կառուցող,գյուղացիութիւնը կոոպերացումի յենթարկող,—հենց այդ նշանակում եւ, վոր կոմունիստը սոցիալիզմ ե կառուցում:

Պետական շինարարութիւն գործին մասնակից անել անկուսակցական նորանոր հարյուրավոր, հազարավոր, միլիոնավոր մասսաներ, զարգացնել խորհրդային դեմոկրատիան—հենց այդ նշանակում ե՛ւ կառուցել Խորհրդային իշխանութիւն, վոր ղեպի սոցիալիզմ ե տանում:

Սոցիալիզմի կառուցման գործը բանվորին ու գյուղացուն ոտար գործ չեւ. ավելին. սոցիալիզմի գործը—դա հենց այն հասարակական-տնտեսական գործն ե, վոր կատարում ե ամեն մի շարքային բանվոր ու գյուղացի՝ յերբ նա պետական արդյունաբերութիւնն ե բարձրացնում կամ գյուղացիութիւնը կոոպերացումի յենթարկում: Մեր 14-րդ համագումարի հիմնական նշանակութիւնը կայանում ե նրանում, վոր նա մեղցույց տվեց, թե ինչպես մեր առորյա աշխատանքից աշխարհումս ղեռես չտեսնված՝ նոր սոցիալիստական հասարակութիւն շինարարութիւն ե ստեղծվում»:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

Ուղղիցիան ընդունում ե, վոր տնտեսական նոր քաղաքականութիւնը յեղել ե և շարունա-

կում ե մնալ բանվոր դասակարգի և կուսակցութեան նահանջ այն դիրքերից, վոր նրանք գրավել եյին ռազմական կոմունիզմի տարիներում: Ուղղիցիան կարծում ե, վոր կուսակցութեանը մինչև այժմ ել շարունակում ե նահանջել: Բայց այդ իրո՞ք այդպէս ե:—Վո՛չ, այդպէս չե՛:

Բայց ի՞նչ ե տնտեսական նոր քաղաքականութիւնը (Новая Экономическая Политика, НЭП)—նեպ-ը: Դա—կուսակցութեան և պրոլետարիատի քաղաքականութիւնն ե, վոր հետապնդում ե յերկրի բոլոր ուժերը ռզտագործել՝ պետական խոշոր արդյունաբերութիւնը բարձրացնելու ու զարգացնելու և գյուղական բարձրացող տնտեսութիւնը կոոպերացումի յենթարկելու համար, այսինքն՝ ստեղծելու տնտեսական պայմաններ կամ, ուրիշ խոսքով, տնտեսական բազա՝ սոցիալիզմ կառուցելու համար: Հոկտեմբերյան հեղափոխութիւնը սոցիալիզմի շինարարութեան համար ստեղծել ե քաղաքական պայմաններ—Խորհրդային իշխանութիւն: Տնտեսական նոր քաղաքականութիւնը կոչված ե ստեղծելու տնտեսական այնպիսի պայմաններ, վոր անհրաժեշտ են լրիվ սոցիալիստական հասարակութիւն կառուցելու համար: Կամ, ինչպէս հաճախ ասում են, նեպ-ը—դեպի սոցիալիզմ տանող ճանապարհն ե:

Բայց տնտեսական նոր քաղաքականութիւնն արդյոք յե՞ղել ե նահանջ:

Այո՛, յեղել ե: Իր ժամանակին մենք նահանջեցինք մի շարք յերկրորդական դիրքերից, մեզ վերապահելով հիմնական և գլխավոր դիրքերը: Իր ժամանակին անհրաժեշտ եր հրաժարվել պարենամատրուցից (продразверстка), մտցրնել պարենաւորք, թույլ տալ ազատ առևտուր, կապալ և ձեռնարկութիւնների կառուցում, հողի կապալ, վարձու աշխատանք և այլն: Ի հարկե այս բոլորը, ռազմական կոմունիզմի համեմատութեամբ, նահանջ ե յեղել: Բայց այդ նահանջն ինչո՞ւ ե տեղի ունեցել: Նրա՛ համար, վորպէսզի մեր ուժերը նո՛ր կերպ վերակառուցենք և հարձակման անցնենք տնտեսական ֆրոնտում, բայց վո՛չ մենակ, այլ գյուղացիութեան հետ միասին, այսինքն՝ բարձրացնել, զարգացնել, առաջ հրել վոչ միայն պետական արդյունաբերութիւնը, այլև գյուղական տնտեսութիւնը: Կամ՝ ինչպէս Վ. Ի. Լենինն ե ասում՝ մենք նահանջեցինք նրա համար, վորպէսզի հետո առաջ վազելով ալեւի մեծ թափով հեռուն թռչենք:

Բայց ինչքա՞ն ժամանակ մենք նահանջեցինք: Նահանջը դադարե՞լ ե, թե՞ մենք դեռ շարունակում ենք նահանջել: Ուղղիցիան ասում ե, վոր այո՛, մենք շարունակում ենք նահանջել:

Վո՛չ, այդ սխալ ե: Նահանջը վաղուց ե դա-
դարած:

Դեռ 1922 թ. մարտ ամսին Վ. Ի. Լենինը, մետաղագործներին համառուսական համագումա-
րի՝ կոմունիստական ֆրակցիայի նիստում ար-
տասանած իր ճառում հայտարարեց. «Մենի՛ շատ
պարզ տեսնում՝ ու չեմք քաղցնում, վոր նեպր—նա-
հանջե.— մենի՛ ալեյի հետո գնացիմք, վորով մենի՛
կարողացանք դիրքերը պահել... Բայց մենի՛ այժմ
կարող եմք ասել, վոր այս նահանջը այն խնա-
տով, թե մենի՛ կապիտալիստներին ինչ գիշում-
ներ եմք անում—վերջացած ե... Մեր տեսնական
նահանջն այժմ մենի՛ կարող եմք դադարեցնել: Բա-
վական ե: Մենի՛ այլեյս յե՛ս չեմք գնա, այլ կըզ-
բաղվեմք նրանով, վորպեսզի ուղիղ ծավալեմք ու
խմբավորեմք մեր ուժերը»:

Իսկ դրանից 3 շաբաթ հետո, մարտի վեր-
ջին (1922 թ.), կուսակցության 11-րդ համա-
գումարն իր վորոշման մեջ հաստատեց Վ. Ի.
Լենինի հայտարարությունը:

Դեռ 1922 թ. սկզբին կուսակցությունը և
բանվոր դասակարգը կանգնեցրին նահանջը, հրա-
ժարվեցին մասնավոր կապիտալին նոր գիշում-
ներ անել և հարձակման անցան՝ տնտեսական
ֆրոնտում: Որեցոր այդ հարձակումը արագացավ,
Լայնացավ ու խորացավ: Յեվ այժմ ամեն վոք

անձամբ տեսնում ե ու զգում ե այդ հարձակ-
ման պտուղները: Արդյունաբերություն արտա-
դրանքը աճել ե ավելի քան յերեք անգամ: Գյու-
ղական տնտեսությունը բարձրացել ե: Ֆինանսնե-
րը ամրացել են: Տրանսպորտն ավելի լավ եաշխա-
տում: Արտաքին և ներքին առևտուրը լայնացել
ե: Կոոպերացիան զարգանում ե: Խոշոր արդյու-
նաբերության 94% -ը պետության ձեռքին ե
գտնվում: Պետությունն ու կոոպերացիան առև-
տրի բոլոր ճյուղերում գերակշռում են: Բանվոր
դասակարգը թվով աճել ե, աշխատանքի արտա-
դրողականությունը բարձրացել, աշխատավարձն
ավելացել: Գյուղատնտեսական հարկը իջեցրված
ե: Պետության ոժանդակությունը գյուղական
տնտեսությանն այժմ շատ ավելի յե, քան այն,
ինչ նա գյուղացիությունից վերցնում ե: Անցյալ
տարիներին համեմատությունմբ՝ գյուղացիության
զբուծությունը բարվոքվել ե:

Այդ—ամեն մարդ տեսնում ե, ամեն մարդ
գիտե և զգում ե: Իսկ այդ ի՞նչ ե վկայում:
Արդյո՞ք այդ ցույց ե տալիս, վոր կուսակցու-
թյունն ու բանվոր դասակարգը նահանջել են
տնտեսական ֆրոնտում, թե՞ ընդհակառակը՝ վկա-
յում են այն մասին, վոր նրանք առաջ են ան-
ցել, հարձակման են անցել:

Այո, այդ վաստերը պերճախոս վկայում են

մեր հարձակման մասին տնտեսական ֆրոնտում,
այն մասին, վոր մենք առաջ ենք գնացել դեպի
սոցիալիզմ:

«Մենք սոցիալիզմին կանցնենք վոչ այլ կերպ՝
քան—նեպի՝ միջոցով»—ասում է Վ. Ի. Լենինը:

Կուսակցութիւնը և բանվոր դասակարգը չեն
հրաժարվում տնտեսական նոր քաղաքականու-
թյունից, մտադիր չեն այդ փոխելու և ռազմա-
կան կոմունիզմի ժամանակվա քաղաքականու-
թյանն անցնելու: Կուսակցութիւնն ու բանվոր
դասակարգը մտադիր չեն նահանջելու, այլ ընդ-
հակառակը, վերջին չորս տարիներին ընթացքում
հաջող հարձակման են դիմել, այժմ ել շարու-
նակում են հարձակվել, կհարձակվեն և ապագա-
յում. կուսակցութիւնն ու բանվոր դասակարգը
տնտեսական նոր քաղաքականութեան ուղիներով
դեպի սոցիալիզմ կգլխեն:

Իսկ ոպոզիցիայի ներկայացուցիչների այն
կարծիքը, թե տնտեսական նոր քաղաքականու-
թյունը յեղել է և շարունակում է լինել լոկ նա-
հանջ,—այդ սխալ կարծիք է: Կյանքը այդ կար-
ծիքն ամեն քայլափոխում ջախջախում է:

Տնտեսական նոր քաղաքականութիւնը,—
ինչպես Լենինն է ասում,—իշխանութիւնն իր
ձեռը վերցրած պրոլետարիատի տնտեսականմիակ
ուղիդ քաղաքականութիւնն է:

Ոպոզիցիան կուսակցութեան Կենտրոնական
Կոմիտեյին մեղադրում էր նրանում, վոր վեր-
ջինս թերագնահատում է կուլակային վտանգը:
Ոպոզիցիայի ներկայացուցիչներն ասում էին:
վոր ԿԿ չի՝ տեսնում կուլակային վտանգը, աչ-
քերը գոցում է այդ վտանգի առաջ:

Բացի այդ, ոպոզիցիան մեղադրում էր Կենտ-
րոնական Կոմիտեյին և ամբողջ կուսակցութիւնը
նրանում, վոր սրանք թերագնահատում են կու-
լակային վտանգը, չունենոր գյուղացիութեանը բա-
վարար ոգնութիւն ցույց չեն տալիս: Սակայն ին-
քը ոպոզիցիան վոչ մի դործնական միջոց առա-
ջարկել չկարողացաւ: Իսկ ԿԿ և ամբողջ կուսակ-
ցութիւնը ընդունում են, վոր ոպոզիցիան կու-
լակային վտանգը գերագնահատում է, նա այդ
վտանգը չի տեսնում այնտեղ, ուր դա իրոք կա:
Ոպոզիցիան թերագնահատում է միջակ գյուղա-
ցու դերն ու նշանակութիւնը:

Կուլակը ինքնին վտանգավոր է արդոք: Ինչ
խոսք՝ վոր վտանգավոր է: Բայց ինչո՞ւմն է կա-
յանում այդ վտանգը: Կուլակային վտանգը կա-
յանում է վոչ միայն նրանում, վոր կուլակը ա-
ճում ու հարստանում է, այլև, գլխավորապես,
այդ կայանում է նրանում, վոր կուլակը ճոր-
տացնում է չունենոր գյուղացուն և ճգնում է դե-

սլի իրեն գրավել միջակ գյուղացուն: Կուլակը ցանկանում ե չունևոր գյուղացուն իրեն յենթարկել, չունևորի և միջակ գյուղացու դաշինքը խանգարել: Կուլակը ցանկանում ե, վոր բանվոր դասակարգի ու չունևոր գյուղացիության դաշինքը միջակ գյուղացիության հետ՝ չամրապնդվի:

Ահա՛ թե վորտեղ ե գլխավոր վտանգը: Ուստի և՛ ի՞նչպէս պետք ե կռվել կուլակի դեմ: Վարչական ճնշում գործ դնելու միջոցով, թե՞ ուրիշ կերպ:

Ոստիկանական դրան վոչինչ չպատասխանեց: Իսկ կուսակցության 14-րդ համագումարը պատասխանեց, վոր կուլակի դեմ կռվել՝ նրա վրա վարչական ճնշում գործ դնելով—այդ նշանակում ե վերադառնալ «չունևորների կոմիտեների» քաղաքականության:

Կուսակցութեանն այդ չի՛ աւելի: Դուս կատի՛ր կա:

Կուլակն ախրան ուժեղ չե, վոր նրա դեմ պատերազմի դուրս գանք: Կուլակի դեմ պետք ե կռվել այլ կերպ: Հարկավոր ե համախմբել, շողկապել չունևորներին: Հարկավոր ե նրանց ոգնել, վոր նրանք տնտեսական տեսակետից վտուքի կանգնեն: Պետք ե ամրացնել չունևորների դաշինքը միջակ գյուղացիության հետ: Հարկավոր ե միջակ գյուղացուն խել կուլակի ագրեսիությունից:

Հարկավոր ե լայնացնել ու խորացնել կուսակցութեան աշխատանքը: Հարկավոր ե չունևորներին և միջակ գյուղացիությանը վարկով ոգնել: Հարկավոր ե չունևորներին և միջակներին կուլակից տնտեսական կախման մեջ գտնվելուց հետզհետե ազատել: Ահա՛ թե ինչու՞ն ե կայանում կուսակցության հիմնական խնդիրը գյուղում:

Այնպէս վոր, նաև ա՛յս խնդրում ոստիկանական սխալում եր: Նա ցանկանում եր կուսակցությունը սխալ ճանապարհով տանել: Բայց այդ նրան չհաջողվեց: Կուսակցությունը՝ Լենինի ուսմունքին հավատարիմ՝ գտնվ ուղիղ ճանապարհը և նա դրանից դուրս չի գա:

Կուսակցության 14-րդ համագումարը դադարատեց այդ յերկու թեքումներն ել, վոր նկատվում եյին գյուղացիական հարցի վերաբերմամբ: Թե՛ մեկ թեքումը, վոր կայանում ե կուլակային վտանգը գերագնահատելու մեջ, և՛ թե մյուս թեքումը, վորը մոռանում ե, վորը չի տեսնում, աչքաթող ե անում կուլակային վտանգը:

Համագումարը առանձնապէս ընդգծեց առաջին թեքման դեմ պայքար մղելու անհրաժեշտությունը, մի թեքման, վորը գերագնահատում ե կուլակային վտանգը և թերագնահատում ե միջակ գյուղացու դերն ու նշանակությունը:

ՆԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ.

Ոպողիցիան, ներկուսակցական հարցերում, համագումարին մի շարք առաջարկութիւններ արեց, վոր կուսակցութիւնն ընդունել յերբեք չէր կարող:

Առաջին առաջարկութիւնը — կուսակցութեան աճումն արագացնել՝ նրա մեջ առնելով դադգահի բանվորներին: Իսկ մինչև համագումարը՝ ոպողիցիայի մի քանի ներկայացուցիչներ առաջարկում էին — մինչև հետևյալ համագումարը կամ մոտակա տարիներում ճգնել հասնել այն վիճակին, վոր ամբողջ կուսակցութեան 90%-ը դադգահի բանվորները կազմեն: Բայց համագումարում այդ առաջարկութիւնը նրանք արդեն չարեցին, ըստ յերևույթին հասկանալով, վոր դա չափազանց անմիտ է:

Յեվ իրոք, ներկայումս կուսակցութիւնը մեկ միլիոնից ավելի անդամներ և թեկնածուներ ունի. դրանցից բանվորների թիվը վոչ պակաս 600 հազար է և վոչ բանվորներինը և ծառայողներինը — 400 հազարից ավելի: Ոպողիցիայի ներկայացուցիչներից վոմանց առաջարկութեամբ կուսակցութեան մեջ վոչ բանվորները պետք է կազմեն 10%, իսկ դրանց թիվը ներկայումս 400 հազար է: Նշանակում է, դրանք 10% կկազմեն այն ժամանակ, յերբ կուսակցութեան մեջ

կլինեն 4 միլիոն անդամ: Իսկ այժմ կուսակցութիւնն ունի միայն մեկ միլիոն: Ասել ե՛ք շտապ կարգով կուսակցութեան մեջ պետք է ընդունել ամենաքիչը յերեք միլիոն բանվոր:

Կուսակցութիւնն այդ կարո՞ղ է անել, և արդո՞ք այդ հարկավոր է: Ձի՛ կարող, և հարկավոր էլ չի:

Կուսակցութիւնը յեղել է և ե՛ք բանվոր դասակարգի ավանգարդը, նրա առաջադահ գունդը: Կուսակցութիւնը կմեծանա՝ իր շարքերն առնելով նոր բանվորների, սակայն այն բանվորներին, վորոնք անցել են պրոլետարական լավ դըպրոց (արհեստակցական միութիւններ, հասարակական կազմակերպութիւններ), վորոնք նո՛ր չեն ընդունվել ֆաբրիկայում, այլ վորոնք արտադրական այնպիսի ստաժ ունեն, վոր բավական համարվի՝ ֆաբրիկայի հնոցում յեփվելու համար:

Պրոլետարական կորիզը կուսակցութեան մեջ կաճի: Միաժամանակ, իհարկե, կուսակցութեան մեջ կնդունվեն հասարակական աշխատանք տանող լավագոյն գյուղացիները: Բայց մոտակա 2—3 տարիների ընթացքում ընդունել 3 միլիոն նոր անդամներ — կուսակցութիւնը չի կարող: Յեվ դրանում վոչ մի կարիք չկա:

Ոպողիցիայի յերկրորդ առաջարկութիւնը —

աշխատանքի դնել նախկին այն խմբակցություններին, վորոնք մի ժամանակ կուսակցության մեջ էյին, վորոնց դեմ կուսակցությունը պայքարել է և վորոնց հեռացրել է։ Իսկ առանձին անձնավորություններին—վորոնք կուսակցության մեջ են գտնվում—աշխատանքի դնելու մասին վոչ վոք չի առարկում։ Դրանցից շատերն Կենտրոնական Կոմիտեյի ղեկավարությամբ աշխատում են, յենթարկվելով կուսակցության վորոշումներին, և վատ չեն աշխատում։ Բայց թույլ տալ, վոր նրանք խմբակցություններ կազմեն՝ չենթարկվելով կուսակցության վորոշումներին և իրենց վճիռները կայացնեն ու անցկացնեն,— կուսակցությունն այդ անել չի կարող։ Թույլ տալ այդպիսի խմբակցությունների գոյությունը—նշանակում է կուսակցությունը ջլատել, այդ դարձնել՝ մեծ ու փոքր, միմյանց դեմ պայքարող խմբեր։ Այդ հավասարազոր կլինեն կուսակցության քայքայմանն ու կործանմանը, դրա հետ միասին նաև կործանմանը Խորհրդային իշխանության, վորին կուսակցությունն է ղեկավարում։

Կոմունիստական կուսակցությունը ուժեղ է իր միասնականությամբ, յերկաթե դիսցիպլինայով։ Կամ, ինչպես Բուխարինն է ասում, մեզ հարկավոր է ունենալ վոչ թե թույլ, ցրված,

բազմերանգ կուսակցություն, դիսկուսիայով պարպող (վիճաբանող) անկամ փիլիսոփաների մի հավաքույթ, այլ հարկավոր է ունենալ ակտիվ, միասնական կամքով կապված՝ միասնական կուսակցություն, յերկաթե կուսակցություն, վոր ընդունակ է հսկայական ընդիմադրություններ հաղթահարել...

Ահա՛ թե ինչու համագումարը մերժեց ոպոզիցիայի այդ առաջարկությունները։

Համագումարը Կենտրոնական Կոմիտեյին հանձնարարեց վճռական պայքար մղել կուսակցության միասնականությունը ջլատելու բոլոր փորձերի դեմ։

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԵՐԱՀԱՅԻՋ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Վ. Ի. Լենինն իր հոդվածներում («Ինչպես վերակազմենք Բանվորա-Գյուղացիական Տեսչությունը» և «Լավ է քիչ՝ բայց լավ»), վոր գրել է 1923 թ. սկզբին, առաջարկեց Վերահսկիչ Հանձնաժողովը և Բանվորա-Գյուղացիական Տեսչությունը վերակազմել։ Նրա առաջարկությունները վերաբերում էյին Վերահսկիչ Հանձնաժողովների կազմի և խնդիրների լայնացման ու դրանց աշխատանքները Բանվորա-Գյուղացիական Տեսչության աշխատանքին միացնելու մասին։ Կուսակցության 12-րդ համագումարը, վորին Լենին

նը հիվանդության պատճառով ներկա գտնվել չկարողացավ, այդ առաջարկություններն ընդունեց: 12-րդ համագումարը, Վ. Ք. Լենինի առաջարկությունները հիմք ընդունելով, Բանվորա-Գյուղացիական տեսչության և Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի խնդիրների մասին մի բանաձև հանեց: Այդ բանաձևը իր մեջ պարունակում էր ԿՎՀ և ԲԳՏ կազմի ու նրանց ընդհանուր և մերձակա խնդիրների մասին: Վերահսկիչ Հանձնաժողովները խնդիրները 12-րդ համագումարը բավականաչափ լայնացրեց: Մինչև 12-րդ համագումարը, Կենտրոնական Հանձնաժողովները հիմնական խնդիրն է հանդիսանում կուսակցության միասնականությունը ամրացնելու և հոգալու կուսակցության հեղինակությունը մասին: Կուսակցության 12-րդ համագումարը, այդ խնդիրներին զուգընթաց, Վերահսկիչ Հանձնաժողովներին պարտավորեցրեց հոգալ բարելավելու նաև պետական ապարատը: Այդ աշխատանքը Վերահսկիչ Հանձնաժողովները տանում են Բանվորա-Գյուղացիական Տեսչության հետ միասին:

Կուսակցության 14-րդ համագումարում, Վերահսկիչ Հանձնաժողովի գործնեյությունը (կուս. 13-րդ համագ., 1924 թ. մայիս — մինչև 14-րդ համագ. ժամանակաշրջ.) մասին զեկուցեց ընկ.

Կուլբիշևը: 14-րդ համագումարը լիովին հավանություն տվեց Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի գործնեյությունը: Համագումարը նիշեց, վոր Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի և Բանվորա-Գյուղացիական Տեսչության գործնեյության հետևանքով մեր պետական ապարատում մի շարք բարելավումներ են կատարված: Համագումարը խրախուսեց Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի գործնեյությունը՝ կուսակցությանն ուտար ու նեխված ելեմենտների դեմ կռվելու խնդրում: Համագումարը Կենտրոնական Վերաստուգիչ Հանձնաժողովի նոր կազմին հանձնարարեց ե՛լ ավելի վճռական պայքար մղել իդեյական տատանումների և կուսակցության միասնական կամքն ու դիպցիպլինան խանգարող փորձերի դեմ և ձեռք առնել բոլոր միջոցները՝ 14-րդ համագումարի ընդունած վորոշումներն հետևողաբար ու անշեղ անցկացնելն ապահովելու համար: Համագումարը հաստատեց Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի և Բանվորա-Գյուղացիական Տեսչության հետագա աշխատանքի մասին արված առաջարկությունները: Այդ առաջարկությունները վերաբերում են մի շարք հարցերի: Հիմնական հարցերն են — կապը մասսաների հետ, աշխատողների ընտրությունը, առաջադրում, պայքար՝ բյուրոկրատիզմի դեմ,

պետական ապարատի աշխատանքի բարելավումը, կուսակցութեան միասնականութեան պաշտպանութիւնը և պայքարը ոտար ու նեխված ելեմենտներէ դեմ, ստուգումն այն որդաններէ, վորոնք կապված են գյուղի հետ:

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Կուսակցութեան 14-րդ համագումարը լսեց ընկ. Բուխարինի զեկուցումը՝ Կոմյերիտմիութեան աշխատանքի մասին: Իր բանաձևում համագումարը մատնանշեց Կոմյերիտմիութեան աշխատանքում կատարած նվաճումները, նիշեց նրա թերութիւնները և հետագա աշխատանքի ուղիները գծեց:

Կոմյերիտմիութիւնը վերջին տարին բավականաչափ աճել է: 1925 թվի հոկտեմբերին նրա շարքերում կային 1,633,000 մարդ, զրանցից—բանվորներ՝ 35,8%, բատրակներ՝ 7,8%, գյուղացիներ՝ 45,1%, ևայլն՝ 11,3%: Կոմյերիտմիութիւնը արտադրութեան վրա աշխատող բանվոր յերիտասարդութեան արդեն կեսը առած է իր շարքերում: Ընթացիկ տարում Կոմյերիտմիութիւնը տնտեսական և կրթական իր աշխատանքում զգալի հաջողութիւններ է ունեցել: Բարձրացել է Կոմյերիտմիութեան քաղաքական

ակտիվութիւնը: Լավացել է նրա աշխատանքը գյուղում: Կոմյերիտմիութիւնը կուսակցութեան ու յերկրի համար նոր ուժեր է դաստիարակում ու առաջ քաշում: Կոմյերիտմիութիւնը, կուսակցութեան հետ միասին, զեկավարում է պիոներական շարժումը, վորի մեջ կան ավելի քան 1,500,000 յերեխաներ:

Համագումարը Կոմյերիտմիութեան կյանքում և աշխատանքում բավականաչափ թույլ կողմեր ու թերութիւններ ևս մատնանշեց:

Մի շարք վայրերում Կոմյերիտմիութիւնը շարունակում է աշխատել առաջիկա ձևով, այնպես, ինչպես հեղափոխութեան առաջին տարիներումն էր: Կոմյերիտմիութիւնը յերիտասարդութեան աշխատանքի, պահանջների և շահերի փոխված պայմանները վատ է հաշիւ առնում: Կոմյերիտմիութեան մեջ տեղ-տեղ նկատելի յե դիսցիպլինայի թուլացում, նրա կազմը չափազանց անկայուն է: Կոմյերիտմիութիւնից նրա առանձին անդամների դուրս գալը չի դադարում: Կոմյերիտմիութիւնը պիոներական շարժման զեկավարութեան վրա բավական ուշադրութիւն չի դարձնում:

Բայց Կոմյերիտմիութեան աշխատանքի մեջ հիմնական և ամենակարևոր թերութիւնը, վոր 14-րդ համագումարը մատնանշեց, այդ—բանվոր

ըա-գյուղացիական յերիտասարդության պահանջներն և Կոմյերիտմիության աշխատանքի ձևերի ու բովանդակության միջև յեղած անհամապատասխանությունն եւ Կոմյերիտմիությունը դեռ ևս չի կարողացել, ինչպես հարկն է, իր աշխատանքը յերիտասարդության պահանջներին հարմարեցնել:

Վերցնենք գյուղը:

Գյուղացիական յերիտասարդությունը ձգտում է բարելավել իր նյութական դրությունը: Նա ուզում է իր տնտեսությունը ավելի լավ հիմքերի վրա դնել, դա նոր ձևով վերակազմել: Նա ցանկանում է իր կուլտուրական մակարդակը բարձրացնել: Այնպիսի գիտելիքներ ստանալ, վոր նրան ոգնեն՝ իր տնտեսությունը բարելավելու: Գյուղացիական յերիտասարդությունը ձգտում է գյուղի կյանքը բարելավել:

Համագումարը նիշեց, վոր գյուղում ամենաուժեղ բջիջները նրանք են, վորոնք վոչ միայն պոլիտիկայով (քաղաքականությամբ) են պարապում, այլ վորոնք գյուղական տնտեսությունը բարձրացնելու համար գործնական աշխատանք են տանում. վորոնք գյուղատնտեսական կրուժոկներն (խմբակներն), կոոպերացիայի, փորձադաշտերի և այլն աշխատանքը կազմակերպում և հարթում են, վորոնք գյուղացիության նախա-

ձեռնությունը զարթեցնում են, իրենց գործնական որինակով գյուղացիությանը գրավում են տնտեսությունը նոր ձևով վերակազմելու, հողի մշակության նոր միջոցներ կիրառելու:

Այս ամենից համագումարը հետևեցրեց, վոր Կոմյերիտմիությունը գյուղում իր աշխատանքը պետք է վերակառուցի: Կոմյերիտմիությունն իր աշխատանքը պետք է այնպես դնի, վոր այդ չխանգարի, այլ գյուղական յերիտասարդությանը ոգնի՝ վերջինիս պահանջներն ու շահերը բավարարելու համար: Կոմյերիտմիությունը պետք է ակտիվ մասնակցություն ունենա գյուղացիության այն աշխատանքում, վոր տարվում է նրանց տնտեսությունները վերակառուցելու և բարվոքելու համար: Ինքնին հասկանալի յե, վոր Կոմյերիտմիությունը պետք է գյուղացիությանը հասկացնի (բայց վոչ լոկ ագիտացիայով, այլ իրեն պրակտիկ որինակով և աշխատանքով) տնտեսավարական նոր ձևերի առավելությունը, նրանց ներս քաշի գյուղատնտեսական կոոպերատիվների մեջ՝ նրանց աշխատանքի բարվոքմանն ու լայնացմանը ոգնելով:

Վոչ միայն ագիտացիայով, այլ և ամենից շատ իր որինակով, իր աշխատանքով, Կոմյերիտմիությունը պրակտիկ կյանքում պետք է ցույց տա և ապացուցի հողագործության նոր ձևերի

առավելությունը, կոռպերացիայի մեջ միանալու ոգուտները, Կոմյերիտմիությունը գյուղական յերիտասարդությանը պետք է մասնակից անի նոր հողագործության, նոր գյուղի շինարարությանը:

Կոմյերիտմիությունը, կուսակցության հետ միասին, պետք է աշխատանք տանի այն ուղղությամբ, վոր միջակ գյուղացիությունը իր կողմը դարձնի:

Կոմյերիտմիությունը միաժամանակ պետք է հոգա չունևոր գյուղացիությանը գործնական ոգնություն հասցնելու: Զունևորների տնտեսություններին ոգնել, արտելներ, անգործ չունևորների համար դպրոց-արհեստանոցներ հիմնել, կուսակցությանն ոգնել՝ չունևորների խմբեր կազմակերպելու գործում, գյուղի խորհրդային, կոռպերատիվ և այլ կազմակերպությունների մեջ չունևորների տեսակարար կշիռը բարձրացնել— ահա Կոմյերիտմիության անելիքները՝ չունևորների շրջանում: Կոմյերիտմիությունը Կուսակցության հետ, չունևոր և միջակ գյուղացիության հետ միասին տնտեսական ֆրոնտում պետք է պայքարի կուլակի դեմ:

Բատրակներին, չունևորներին, միջին գյուղացիական յերիտասարդությանը միության մեջ քաշել, գյուղական բջիջների աշխատանքը բա-

րելավել, իրենց անդամների քաղաքական մակարդակը բարձրացնել, իրենց աշխատանքներում գյուղացիական յերիտասարդության պահանջների ու կարիքների բավարարումը Կոմյերիտմիության ընդհանուր նպատակների հետ համաձայնեցնել,— ահա՛ այն, ինչ յերբեք չպետք է մոռանան Կոմյերիտմիության գյուղական բջիջները:

Համագումարը մատնանշեց, վոր տեղ-տեղ կուսակցական կազմակերպությունները Կոմյերիտմիության աշխատանքին քիչ ուշադրություն են դարձնում, նրանց վատ են դեկավարում, Կոմյերիտմիության մեջ աշխատանք տանելու համար թույլ աշխատողներին յեն ուղարկում: Այգպիսի դրությունը համագումարը գտավ չափազանց աննորմալ և խիստ վտանգալից:

«Կոմյերիտմիոթյան և կուսակցության ղեկավարությունը ուժեղացնել—ասաց համագումարը—կուսակցության կարելիորագույն յեղ առաջնակարգ անելիքն է կազմում ներկա մոմենտում»:

Համագումարը կուսակցական կազմակերպություններին առաջարկեց Կոմյերիտմիության աշխատանքի հարցերը կուսակցական ժողովներում հաճախակի քննել, Կոմյերիտմիության հետ միացյալ ժողովներ հաճախ գումարել, Կոմյերիտմիության մեջ աշխատանք տանելու համար ա-

մենալավ կուսակցականներին ուղարկել, Կոմ-
յերիտմիության կուսակցական կորիզը աշխա-
տանքի համար մեծ մասամբ ոգտագործել հենց
իրեն միության մեջ, Կոմյերիտմիության մա-
մուլի նկատմամբ ղեկավարությունը ուժեղացնել:

Պիոներական շարժումը վերջին տարին զգա-
լի չափով աճել է: Նրա շարքերում մեկ ու կես
միլիոն յերեխաներ կան: Պիոներական կուլեկտիվ-
ները յերեխաների դաստիարակության գործում
մեծ նշանակություն ունեն:

Բայց այդ շարժման մեջ կան բացեր: Հա-
մագումարը մատնանշեց, վոր յերեք սերունդնե-
րի ավանգարդային (առաջապահ) կազմակերպու-
թյունների միջև գոյություն ունի մի տեսակ
անջատում, անջրպետ: Կուսակցությունը Կոմ-
յերիտմիության վրա քիչ ուշադրություն է
դարձնում և համարյա վոչ մի ուշադրություն
չի դարձնում պիոներական կազմակերպություն-
ների վրա: Կոմյերիտմիությունն ևս պիոներա-
կան շարժումը տեղ-տեղ վա՛տ է ղեկավարում:
Պիոներների կուլվարները միշտ չե, վոր իրենց
բարձրության վրա յեն: Հաճախ նրանք վա՛տ են
պատրաստված, չեն կարողանում իրենց դերը
կատարել, փոխանակ դաստիարակչական աշխա-
տանքը ուժեղացնելու, տարվում են արտաքի-
նով, շարժումների ձևերով:

Ամեն տեղ չե և միշտ չե, վոր պիոներական
կուլեկտիվների աշխատանքը համաձայնեցված է
դպրոցական աշխատանքին: Պիոներներն աշխա-
տանքով հաճախ ծանրաբեռնված են, շատ են հոգ-
նում, վորպիսի հանգամանքը վտանգում է ման-
կական որգանիզմի ուժերը:

14-րդ համագումարը կուսակցական կազմա-
կերպություններին առաջարկեց պիոներական
կազմակերպությունների աշխատանքը ղեկավա-
րելու համար կուսակցական պատրաստված ըն-
կերների կարգել, Կոմյերիտմիությանն ոգնել՝ պիո-
ներական կազմակերպությունների մեջ հիվանդ
յերևույթները վերացնելու, ամենալուրջ ուշա-
դրություն դարձնել պիոներական կուլեկտիվների
վարիչների պատրաստության վրա:

ՀԱՄԱՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒ- ԹՅՈՒՆ (Բ)

14-րդ համագումարը փորոշեց կուսակցու-
թյան անունը փոխել, նրան կոչելով այսպես—
Համամիության Կոմունիստական Կուսակցու-
թյուն (բոյլշևիկների), կամ կրճատ՝ ՀԿԿ (Բ)
[Всесоюзная Коммунистическая Партия (боль-
шеви́ков)=ВКП (б)], փոխանակ նախկին ան-
վան—Ռուսաստանի Կոմունիստական Կուսակ-
ցություն (բոյլշևիկների), կամ՝ ՌԿԿ (Բ):

Դժվար չե հասկանալ, թե ինչու կուսակցութեան 14-րդ համագումարն այդ վորոշումն արեց:

Ռկկ մեր յերկրում հանդիսանում ե ղեկավարող կուսակցութիւնը, հասարակական կազմակերպութիւններ ղեկավարող ուժը:

Ազգային կուսակցական կազմակերպութիւնները, որինսկ՝ Ուկրաինայի, Բելոռուսիայի և ուրիշները, մտնում են Ռկկ մեջ, վորպէս նրա բաղկացուցիչ մասեր: Այդ կազմակերպութիւնների կուսակցական կոմիտեներն ունեն այն իրավունքներն, ինչ իրավունքներ ունեն շրջանային և նահանգային կոմիտեները: Նրանք յենթարկվում են կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեին:

Սակայն մեր կուսակցութիւնը մինչև այժմ կրում եր—«Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցութիւն (բոլշևիկներ)» անունը: Կուսակցութեան անվան և նրա կազմի, թափի ու աշխատանքի ելութեան միջև գոյութիւն ունեցող անհամապատասխանութիւնն այժմ առանձապէս ակնհայտնի դարձավ:

Հասել եր ժամանակը՝ կուսակցութեան վերանվանելու հարցը վորոշել:

Հասել եր ժամանակը, վոր կուսակցութիւնը կրեր մի այնպիսի անուն, վոր համապատասխաներ նրա ղերին, նրա աշխատանքի ելութեանը:

Յեւ 14-րդ համագումարը վորոշեց Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցութեանը (բոլշևիկներ) վերանվանել՝ Համախորհրդան Կոմունիստական Կուսակցութեան (բոլշևիկներ):

Բայց դրանից կուսակցութեան վոչ կազմակերպչական կառուցվածքը և վոչ ել աշխատանքի ելութիւնը չեն փոխվում:

Համամիութեան Կոմունիստական Կուսակցութիւնը նույնքան միասնական, միաձույլ, դիսցիպլինային խիստ հետևող կուսակցութիւն կլինի, ինչպէս նա յեղել ե և առաջ:

Համամիութեան Կոմունիստական Կուսակցութիւնը առաջվա սլէս հավատարիմ կմնա իր առաջնորդ Վլադիմիր Իլյիչ Լենինի ուսմունքին:

ՀԿԿ (բ) Խորհրդային Միութեան բանվորական ղառակարգին ու գյուղացիութեանը կառաջնորդի ղեպի նոր նվաճումներ ու հաղթանակներ՝ սոցիալիստական շինարարութեան բոլոր ֆրոնտներում:

Կուսակցութիւնը ուժեղ ե իր միասնականութեամբ, միաձույլ լինելով և ղիսցիպլինայով, իր ուսմունքով, բանվոր-գյուղացիական մասսաների հետ ունեցած իր կապով: Յեւ վոչ վոք չի կարող կոտրել նրա միասնականութիւնը, թուլացնել նրա ղիսցիպլինան, տատանել նրա շարքերի ամրութիւնը: Յեւ վոչ վոք չի կարող

կուսակցութիւնը շեղել այն ճանապարհից, վոր գծել է նրա առաջնորդը:

Խորհրդային պետութեան կյանքում ամենածանր և ամենավտանգավոր մոմենտներին կուսակցութիւնը ներքին բոլոր տարաձայնութիւններէից ու դիսկուսիաներէից դուրս է յեկել ավելի ևս ամուր, միաձուլ ու միասնական:

Կուսակցութիւնը կաճի՝ իր շարքերում ընդունելով պրոլետարիատի առաջավոր մասը և նրան անձնվեր գյուղացիութեան ակտիվ մասը:

Կուսակցութիւնը կհոգա, վոր պետական կառավարութեան աշխատանքին բանվորներին և գյուղացիներին ավելի՛ լայն խավերը մասնակից լինեն:

Կուսակցութիւնն իր շուրջը կհամախմբի, կկազմակերպի չունևոր գյուղացիութիւնը, կոգնի նրան վոտքի յելնելու: Կուսակցութիւնը կամրապնդի դաշինքը՝ չունևոր և միջակ գյուղացիութեան միջև: Կուսակցութիւնը հաշվի կառնի միջակ գյուղացու պահանջները, կարիքները և, Խորհր. Իշխանութեան ուժերի ու միջոցների հաւորավորութեան սահմաններում՝ կբավարարի: Կուսակցութիւնը կոգնի չունևոր և միջակ գյուղացիներին՝ կուլակի դեմ տարվող նրա պայքարում: Կուսակցութիւնը անխոնջ կհոգա, վոր բանվոր դասակարգի ու չքավոր գյուղացիութեան՝ միջակ

գյուղացիութեան հետ կնքած դաշինքն ամրացվի: Կուսակցութիւնը Խորհրդային Միութեան տնտեսութիւնը կգարգացնի ու առաջ կմղի:

Կուսակցութիւնը, բանվոր դասակարգի և գյուղացիութեան հետ միասին կձգտի և կհասնի այն վիճակին, վոր Խորհրդային Միութիւնը տեխնիկայի կողմից թույլ ու աղքատ յերկրից դառնա մի յերկիր, ուր ավելի ու ավելի պիտի զարգանա սոցիալիստական արդյունաբերութիւնը, ուր ավելի ու ավելի պիտի զարգանա կոոպերացումի ուղիների վրա անցնող գյուղական տնտեսութիւնը:

ՀԱՎԵԼՎԱՆ

ՀԿԿ (բ) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ԿԸՁՄԸ

(ԸՆՏՐԱԾ՝ 14-րդ համագումարում

ԿԿ ԱՆԴԱՄՆԵՐԸ.—

1. Անդրեա, 2. Անտիպով, 3. Արտյուսինա,
4. Բադաև, 5. Բառման, 6. Բուքնով, 7. Բու-
խարին, 8. Վորոշիլով, 9. Ջերթինսկի, 10. Դո-
գադով, 11. Եվդոկիմով, 12. Ժուկով, 13. Վե-
լենսկի, 14. Ջինովև, 15. Կաբանով, 16. Կազա-
նովիչ, 17. Կալինին, 18. Կամենս, 19. Կվիրինգ,
20. Կիրկիթ, 21. Կիրով, 22. Կոլոտիլով, 23. Կո-
մարով, 24. Կոսսիոր Ստ., 25. Կոտով, 26. Կրա-
սին, 27. Կրթիժանովսկի, 28. Կուբյակ, 29. Կու-
լիկով, 30. Լեպսե, 31. Լոբով, 32. Մանուիլսկի,
33. Մեդվեդև, 34. Միկոյան, 35. Միխայլով, 36.
Մոլոտով, 37. Որդժոնիկիդզե, 38. Պետրովսկի,
39. Պյատակով, 40. Ռադչենկո, 41. Ռակովսկի,
42. Ռուդկուտակ, 43. Ռուժյանցև, 44. Ռուխի-
մովիչ, 45. Ռիկով, 46. Սմիլգա, 47. Սմիրնով
Ա. Պ., 48. Սոկոլյնիկով, 49. Ստալին, 50. Ստե-
պանով-Սկվորցով, 51. Սուլիմով, 52. Տոլկոն-

ցև, 53. Տոմսկիյ, 54. Տրոցկիյ, 55. Ուզլանով, 56.
Ուխանով, 57. Յյուրուպա, 58. Չեչերին, 59.
Չուբար, 60. Չուդով, 61. Շվարց, 62. Շվեբնիկ,
63. Շմիդտ Վ.:

Թ Ե Կ Ն Ա Մ Ո Ւ Ն Ե Ր Ը

1. Որախելաշվիլի, 2. Մաբկով, 3. Մուսա-
բեկով, 4. Կիսելև Ալ., 5. Ուրիվայև, 6. Եյ-
խե, 7. Ռինդին, 8. Ռուժյանցեվ Կ., 9. Իկրամով,
10. Ունչլիխա, 11. Ստրիկալիյ, 12. Սիրցով, 13.
Կասսիոր Իոսիֆ, 14. Իվանով Վ., 15. Գեյ, 16.
Լյուբիմով Ի., 17. Պոստիշև, 18. Գոլոշենկին, 19.
Նոսով, 20. Ուգարով, 21. Կրինիցկիյ, 22. Ժդա-
նով, 23. Գամարնիկ, 24. Լուկաշին, 25. Մաա-
վեև, 26. Լոմինաձե, 27. Կալիգինա, 28. Կլի-
մենկո, 29. Սկրիպնիկ, 30. Կոնդրատև, 31.
Չապլին, 32. Կադացկի, 33. Մոսկվին, 34. Սե-
մենով, 35. Ավդեև, 36. Վարեյկիս, 37. Մեյլ-
նիչանսկի, 38. Ոսինսկի, 39. Կամինսկի, 40.
Լոմով, 41. Նիկոլաևա, 42. Լաշևիչ, 43. Սերե-
բրովսկի:

ՀԿԿ (բ) ԿԿ ՔԸՂԲՅՈՒՐՈՆ

Քաղբյուրոյի անդամներ—ընկ. ընկ. Բուխա-
րին, Վորոշիլով, Զինովյեվ, Կալինին, Մոլոտով,
Ռիկով, Ստալին, Տոմսկիյ յեվ Տրոցկիյ:

Թեկնածուներ—ընկ. ընկ. Ռուդզուսակ, Զեր-
ժինսկիյ, Պեստովսկիյ, Ուզրանով յեւ Վալենտի:

ՀԿԿ ԿԿ (բ) ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Կենտրոնական Կոմիտեյի քարտուղարներ ըն-
տրված են՝ ընկ. ընկ. Սաւրին, Մորոսով, Ուզրա-
նով, Կասսիր Ս. Վ. յեւ Յելիդովսկի:

Թեկնածուներ—ընկ. ընկ. Բուրևով յեւ Ար-
սյուխինա:

Գլխավոր քարտուղար—ընկ. Սաւրին:

ՀԿԿ ԿԿ (բ) ԿԱԶՄԵՅՈՒՐՈՆ

Կազմբյուրոյի անդամները—ընկ. ընկ. Սա-
ւրին, Մորոսով, Ուզրանով, Կասսիր Ս. Վ., Յել-
դովսկի, Բուրևով, Արսյուխինա, Անդրեյեւ, Դո-
գադով, Սմիրնով Ա. Պ., յեւ Կլիմենց:

Թեկնածուներ—ընկ. ընկ. Միխայլով, Լեպ-
սե, Չապրին, Զմիդ Վ. յեւ Ուխանով:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

1. Ավդեյե, 2. Ամոսով, 3. Բորյան Բագրատ,
4. Բուլին, 5. Բուենդը, 6. Վասիլիա, 7. Վեյն-
բերգ, 8. Վիկտորեն, 9. Վլադիմիրսկի, 10. Գե-
րասիմով, 11. Գոյցման, 12. Գրուզել, 13. Գրու-
սյեւ, 14. Գուսկով, 15. Յենուկիձե, 16. Զեմ-
լյաչկա, 17. Իլյին, 18. Կարավաևա, 19. Կորոտ-

կով, 20. Կոսարե, 21. Կրիվով, 22. Կրումին, 23.
Կրուպսկայա, 24. Կուլմենկո, 25. Կուլբիշե, 26.
Լարին Վ. Ֆ., 27. Լեբեդե, 28. Լենգնիգ, 29.
Լիսիցյին, 30. Լոկացկով, 31. Մանդլարա, 32.
Մեշչերյակով, 33. Միլյուտին, 34. Մեյլչակով,
35. Մինկով, 36. Միտրոֆանով, 37. Մուրալով,
Ն. Ի., 38. Մուրանով, 39. Նիկոլաև, 40. Նո-
վոսելով, 41. Ոսով, 42. Պանով, 43. Պաստու-
խով, 44. Պետերս, 45. Պոզովոյսկի, 46. Պոզերն,
47. Պրավդին, 48. Պյատնիցկի, 49. Ռաստուպչին,
50. Ռոզիտ, 51. Ռոզմիրովիչ, 52. Ռոյզենման,
53. Սախարովա, 54. Սերգուշե, 55. Սիմկով,
56. Սկոբեյնիկով, 57. Սմիդովիչ Ս. Ն., 58. Սո-
բոև, 59. Սոյլց, 60. Ստեն Յա. Ն., 61. Ստեցկի Ս.,
62. Ստուբուլա, 63. Տրոիցկի, 64. Ուլյանովա Մ. Ի.,
65. Ֆիգաաներ, 66. Ֆիլեր, 67. Զուցկաև, 68.
Շկիրյատով, 69. Շկլովսկի, 70. Շոտման, 71.
Յակովլև, 72. Յանսոն, 73. Յարոսլավսկի, 74.
Կորոստելև Գ. (Մուսկով), 75. Սոյֆեր, 76. Բա-
կաև (Լենինգրադ), 77. Կլինով (Լենինգրադ),
78. Կոկովիլին (Ուրալ), 79. Դավիդով (Ուրալ)
80. Կոմիսսարով (Հյուս. Կովկաս), 81. Վիշնյա-
կովա (Հյուս. Կովկաս), 82. Տերեխով (Ուկրա-
նա), 83. Պոկկո (Ուկր.), 84. Ռոստովով (Ուկր.),
85. Գրիգորենկո (Ուկրաինա), 86. Նազարեթ-
յան (Անդրկովկաս), 87. Նեֆենդե (Անդրկովկաս),

88. Դուրիձե (Անդրկ.), 89. Նիկոնորով (Բրիանսկ), 90. Կալաշնիկով (Սիբիր), 91. Կուզրյաշև (Տամբով), 92. Սաուդիտով (Կուրսկ), 93. Մորոզով (Իվանովո-Վոդնեսենսկ), 94. Բուսսե (Ն. Նովգորոդ), 95. Բաուեր (Սամարա), 96. Բուշուև (Տվեր), 97. Գրիգորև (Տուլա), 98. Նովիկով (Թաթար. շրջան), 99. Ռադուս-Ջենկելիչ (Բելոռուսիա), 100. Մալլենբեկով (Ուզբեկիստան), 101. Կուլեև-Կարա (Թուրքմենիստան), 102. Մորոզով Ի. Պ. (Ղազախստան), 103. Դիրիկ (Ղրիմ), 104. Յուրցեն (Բաշկիրյա), 105. Գորչակ (Ուլյանովսկ), 106. Լեբեդև (Յարոսլավլ), 107. Սմոլոդինով (Հեռ. Արևելք), 108. Աբել (Վորոնեժ), 109. Ստարոստին (Մոսկվա), 110. Մեդվեդև (Մոսկվա), 111. Ֆեդկելիչ (Մոսկվա), 112. Լադոշին (Մոսկվա), 113. Կուբիցկի (Մոսկվա), 114. Մեդովա (Մոսկվա), 115. Տալբերգ (Լենինգրադ), 116. Ռեյնվալդ (Լենինգրադ), 117. Լիդձին (Լենինգրադ), 118. Պետերսոն (Լենինգրադ), 119. Սոլովյով (Լենինգրադ), 120. Բելովա (Իվանովո-Վոդնեսենսկ), 121. Կուլցիս (Ն. Նովգորոդ), 122. Սաֆրոնով (Տուլա), 123. Գոնչարովա (Տվեր), 124. Կոնստանտինով (Արխանգելսկի), 125. Կինեշեմցև (Կոստրոմա), 126. Բատաշև (Ուրալ), 127. Անտոնով (Ուրալ), 128. Գորյունով (Ուրալ), 129. Լեբեդև (Ուրալ), 130.

Շելյուխին (Որյոլ), 131. Մասլյուկ (Հյուս. Կովկաս), 132. Յելագին (Հյուս. Կովկաս), 133. Բաբուշկին (Հյուս. Կովկաս), 134. Դյակով (Սիբիր), 135. Կորյալչենկով, 136. Դյաուև (Բրյանսկ), 137. Մալյցև (Ուկրաինա), 138. Վասիլև (Ուկրաինա), 139. Պրոխորով (Ուկրաինա), 140. Մոսկալև (Ուկրաինա), 141. Գարսկով (Ուկրաինա), 142. Ջագրեբայլինյ (Ուկրաինա), 143. Տրուտնով (Ուկրաինա), 144. Պլեշկով (Անդրկովկաս), 145. Խաբիբուլլա (Անդրկովկաս), 146. Նիկիտին (Անդրկովկաս), 147. Բոչկարև (Վոստ. շրջան), 148. Գուրկով (Ստալինգրադ), 149. Շկիրիչ (Բելոռուսյա), 150. Ռադումով (Սարատով), 151. Մակեև (Տաջիկստան), 152. Կարնեբաև (Ղազախստան), 153. Յեվդոկիմով (Հյուս. Կովկաս), 154. Դեմկին (Որյոլ), 155. Սաուրին (Վոլոդա), 156. Կոնենկով (Սմոլենսկ), 157. Կոսով (Բելոռուսիա), 158. Մինին (Պսկով), 159. Բերեզնիյ (Ուկրաինա), 160. Բիրիկով (Սիբիր), 161. Սոդրիշվիլի Իվան (Անդրկովկաս), 162. Մարտիկյան (Անդրկովկաս), 163. Յերշով (Ուրալ):

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Անդամներ—ընկ. ընկ. Վլադիմիրսկի, Գուսև, Իլյին, Կոկովիչին, Կոմիսսարով, Կորոստելև, Կո-

բոսկով, Կոսարյով, Կրիվով, Կուլբիշև, Լեբյեգ, Լենգիգ, Լյխիցին, Նազարեթյան, Պաստուխով, Ռոյզենման, Սոլյց, Չուցկան, Շկիրյատով, Յանսոն, Յարոսլավսկի:

Թեկնածուներ—Ընկ. Ընկ. Շտոման, Յենուկիձե, Սախարովա, Յակովլև, Ոյամով, Ավգեև, Ռադուս-Ջենկովիչ, Կալաշնիկով, Մանժարա:

Կվչ ԿԿ նախագահ և ընտրված ընկ. Կույբիշևի Վ. Վ.

Կվչ ԲԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անդամներ—ՀԿԿ (բ) Կվչ նախագահ ընկ. Կուլբիշև Վ. Վ., ՀԿԿ (բ) Կվչ գլխավոր քարտուղար ընկ. Յանսոն, Ն. Մ., և ՀԿԿ (բ) Կվչ քարտուղարներ ընկ. ընկ. Յարոսլավսկի Ե., Շկիրյատով Մ. Ֆ. և Գուսև Ս. Ի.:

Թեկնածուներ—Ընկ. Ընկ. Իլյին, Չուցկան և Լեբյեգ:

Կվչ ԿՈՒՍԿՈՒԼԵԳԻԱՆ

Անդամներ—Ընկ. Ընկ. Յարոսլավսկի, Սոլյց, Սախարովա, Կորոտկով և Սմիգովիչ Ս. Ն.:

Թեկնածուներ—Ընկ. Ընկ. Ոյամով և Կարավան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵԶ.

ԽՍՀՄ միջազգային դրուքներ	5
ԽՍՀՄ ներքին դրուքներ	12
ԽՍՀՄ սնեստուրյան հիմնական գիծը	18
Գյուղական սնեստուրյան զարգացման ուղիներ	28
Կուսակցության 14-րդ համագումարը գյուղացիության մասին	36
Մասսաների ակտիվության աճումը	53
Կուսակցական շինարարություն	
Ներկուսակցական դեմոկրատիա	59
Կուսակցության աճումն ու միասնականությունը	61
Տարածայնությունները համագումարում	64
Սոցիալիզմի շինարարությունը մեր յերկրում	65
Տնեսական նոր փաղափակություն	73
Գյուղացիական հարց	79
Ներկուսակցական հարցեր	82
ՀԿԿ (բ) Կենտրոնական վերահսկիչ Հանձնաժողով	85
Կույբերիսկությունը յեվ պիոներական շարժումը	88
Համալիության Կոմունիստական Կուսակցություն (բոլշևիկների)	95
Հավելված—Կենտրոնական Կոմիտեի, Քաղբյուրոյի, Կազմբյուրոյի, ԿԿ Քարտուղարության, Կենտրոնական վերահսկիչ Հանձնաժողովի անդամների ու քեկնածուների ցուցակները	99

**ԽՈՐՀՐ. ՍՈՑ. ՀԱՆՐ. ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ
ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

— Հ ա յ կ ա կ ա ն ս ե կ ց ի ա —

Մոսկվա, Նիկոլսկի փող. № 10.

- Ի. ՍՏԱԼԻՆ—Գյուղացիական հարց: Գինը 50 կոպ.
Ի. ՍՏԱԼԻՆ—Ազգային հարցը: (Տպագրվում է):
Վ. ԼԵՆԻՆ Պատգամներ լեհիսասարդության. գինը 15 կ.
Ի. ՖԼԵՐՈՎՍԿԻՅ—Մեր առաջին բանվ.-գյուղ. հեղափո-
խությունը:
Ն. ԿՐՈՒՊՍԿԻՅԱ—Լենինի պատգամները ժողովրդական
լուսավորության մասին: Գինը 20 կ.
Զ. ԲՈՅԱՐՍԿԻՅԱ—Կարա Յեսկին (կենսագր.): Գինը 10 կ.
ԼԱՎՐԵՆՏԻՆՎ.—Ինչպես աշխուժացնել խորհուրդները:
Ն. ՏՈՒՐՅԱԿՈՒԼՈՎ, Ազգային հարցը լեվ դպրոցը:
Գինը 40 կոպ.
Բ. ԺԱՎՈՐՈՆԿՈՎ, Հասարակագիտությունը I աստիճանի
դպրոցում:
Ն. ԵԼԻՉԱՐՈՎ.—Ի՞նչ վորոշեց կուսակցության XIV հա-
մագումարը:
Ա. ԴՄԻՏՐՅԵՎԱ.—Տգիտությունը լեվ սնահավասությունը:
Գինը 15 կոպ.
Մ. ԼԻՎԵՆՍԿԻ—Գյուղատնտեսական հարկ: Գինը 20 կ.
ՅԵՍԻՊՈՎ.—Գյուղացիության պահանջները լեվ խորհրդա-
լին, դպրոցի ծրագրերը: Գինը 12 կ.

Պ ՎԼԱՍՈՎ.—Հոդի մշակումը յերաժի ծախսով:

Գինը 40 կոպ.

Լ. ՅՈԶԵՖՈՎԻՉ—Գյուղ կանգնի գերան կկոտրի (կոտպե-
րացիան գյուղում): Գինը 30 կոպ.

Ի. ՊՈԴՅԱՊՈԼՍԿԻ Աստու կամը բե՞ գյուղասնտեսական
գիտությունը:

ԳՈՒԳԼԻՆ—Փորոզ փայտից մինչեւ սրակտր:

Ա. ԿՐԱՎՉԵՆԿՈ—Թե ինչպես կարելի յե գյուղում էլե-
սականություն անցկացնել: Գինը 20 կ.

Պ. ԼԻՍԱՉԵՎ.—Խոզը գյուղացու կերակրողն է.

Ն. ԲՐԱՆՍԵ—Թե ի՞նչպես գերմանացին սխալեց. վոր
կովը տարին յերկու անգամ ծնի:

Ա. ՍԿՈՄՐՈՒՆՈՎ.—Առաջին ոգնությունը հիվանդ կեն-
դանուն:

Ա. ԲՐԱՆՍԻՆԻՐԳ—Ընտանի կենդանիների վարակիչ հի-
վանդություններ:

Ն. ՍԵՄԱՇԿՈ—Թոփախ (պահպանարդ):

Բ. ԳԻՆՍԻՆԻՐԳ—Յերեխաների վարակիչ հիվանդություն-
ները: Գինը 30 կ.

Վ. ԲՐՈՆՆԵՐ—Վենեռական ախտը (պակ.) գինը 25 կ.

Ա. ՍՊԵՐԱՆՍԿԻ—Մոր ալբուբենը (պակ.):

Գ. ԳՐԱՎԵ—Ի՞նչպես է սարքված սխեմները:

ԳՐԵՄՅԱՅԿԻՅ—Վորոտ, կայծակ յեվ յեղեհականություն:

Ա.ԳՈԼԱ.—Կենդանիների յեվ մարդու ծագումը:

Ն. ՍԵՄԵԿԻՆ—Արեվը, նրա վորդիները յեվ բույները:

(Տպագր.):

Ա. ՌՈՒԲԻՆՇԵՆ—Ուղտից մինչեւ ալբուբեն: (Տպագր.):

Վ. ՅԱՉՎԻՅԿԻՅ—Մարդկային բնակարանի պատմութ.

Մ. ԳՈՐԿԻՅ—Յերիսասարդ գրողը: Մարդը: Գինը 15 կ.
Ա. ՍԵՐԱՖԻՄՈՎԻՉ—Պատմածներ: (Տպագր.):

Գ. ՄԱՄԻՆ—ՍԻԲԻՐՅԱԿ—Մոծակի յեվ արշի մասին:

Պատկերագրող: Գինը 13 կ.

Պ. ՈՐԼՈՎԵՅ—Ճամբորդություն այնրալանով: (Պատկե-
րագրող): Գինը 20 կ.

Պ. ՈՐԼՈՎԵՅ—Քիմիկոս Կուզկան: (Պակ.) գինը 25 կ.

Ա. ԿՈՒՊՐԻՆ—Յերկրի խորքերում: (Պակ.) գինը 15 կ.

Ա. ՆԵՎԵՐՈՎ—Ինչպես էլին ապրում սիկնիկները յեվ
ինչ արեց արհմեն զինվորը: (Պակ.) Գինը 16 կոպ.

Ա. ԿՐԱՎՉԵՆԿՈ—Ինչպես Սաֆոն Կարմիր Բանակային
դարձավ: Գինը 35 կոպ.

Ֆ. ՖՈՔՍ—Միքիստ մեկ ծախով: (Պակ.) գինը 20 կ.

ՅԵ. ՌՍԻՆ—Պրոներ, պահպանիր առողջությունը:
Գինը 10 կ.

ՌԻԺՈՎ.—Պատանի պիոներ: (Փողովածու): (Տպագր.):

Պ. ԽԼԵՊՆԻԿՈՎ.—Կարմրամորթները (Հյուս. Ամերիկայի
հնդիկների կյանքից:



Գ ի մ ե լ Ենտրիզատ, Москва, Никольская, 10
Կամ Հայաստանի Պետհրատին:

1. The first of these is the fact that the
2. second of these is the fact that the

3. third of these is the fact that the

4. fourth of these is the fact that the

5. fifth of these is the fact that the

6. sixth of these is the fact that the


7. seventh of these is the fact that the

8. eighth of these is the fact that the

9. ninth of these is the fact that the

10. tenth of these is the fact that the

11. eleventh of these is the fact that the



ԳԻՆԸ 30 ԿՈՊ.



Н. ЕЛИЗАРОВ
Что постановил
XIV Съезд
Коммунистич. Партий.

Центральное Издательство Народов Союза С. С. Р.

Москва,

Никольская 10.

ՀՀ Ազգային գրադարան



NL0182164

